

9(714)

2025

Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Հանաչել զիմաստություն եւ զխրաք, իմանալ զբանս հանճարոյ

ԼՈՒՄԱՐԱՐ

Лусарар ●

ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ

● Lusarar

ԵՐԳԸ ՄԵՉ ՕԳՆՈՒՄ Է ԱՊՐԵԼ

«Ահա երկրորդ տարին է, որ Արցախից հեռու՝ մենք հաւաքուում ենք այս պայմաններում: Երգում ենք, որ մեր մեջ վառ ու թրթռուն մնայ մեր Արցախ աշխարհը, որ՝ առօրեան իր դաժան հեւքով ու կշռոյթով այն չհանի ո՛չ մեր լեզուից, ո՛չ մեր մտահորիզոնից, որպէսզի ամրապնդենք արցախեան մեր կեանքի պայծառ յիշատակները, ու որ՝ չխամրեն մեր երազանքները: Որ՝ չզիջենք մեր երազանքները յաջորդ սերունդին, այլ ամեն օր գործենք դրանց իրականացման ի խնդիր...»:

«Երգում ենք, որ Արցախի հողը զգա մեր երգի թրթռը... Մեր հոգեխոցը մեղմելու համար մենք պիտի շարունակենք երգել... Պիտի հավատանք,



որ բարու և արդարության հաղթանակը միայն հեքիաթների մեջ չէ...»:

Ջաբար Քեշիշյան
Տես՝ էջ 2

ԱՐՑԱՒ

Ու թե մի օր ես քեզանից
Ստիպողաբար հեռացել եմ՝
Չմտածես գնացել եմ
Ու չեմ դառնա ես էլ ետ...
Երբ իմանաս, որ քո տնից,
Որ իմ տնից
Անխռով ես հեռացել եմ,
Չմեղանաս...
Ձղջացել եմ ես արդեն.
Չմտածես՝ հեռացել ու
Քեզ հեշտությամբ մոռացել եմ:
Հեռացել ու հասկացել եմ,
Որ զնալս մնալուցս թանկ
արժեցավ,
Որ կարոտս անտեր սիրուց
թանկ արժեցավ,
Որ ապրելս փրկվելուցս թանկ
արժեցավ:

Հեռացել ու հասկացել եմ,
Որ հայրենի բնօրրանը
Այն խոցված աղոթարանը,
Ավերակը, փլատակը,
Արժեն այնքան, որքան ոչ մի
դրյակ չարժե,
Որ մութ ու ցուրտ, մարած ճրագ
Արժեն հարյուր անհուն կրակ...
Չմտածես՝ հեռացել ու
Քեզ հեշտությամբ մոռացել եմ:
Կարոտում եմ...
Մի օր էսպես լուռ չեմ մատի.
Հազար անգամ քո կարոտից
կխենթանամ, վեր կկենամ
Ու կշտապեմ գիրկդ, Արցախ...
Ների՛ր, որ քեզ ես թողել ու
հեռացել եմ...

Ռիդա ՎԱՆԵՍՅԱՆ

ՎԵՐՋԻՆ ՍՈՒՐԲ ԱՆՄԱՀ ՊԱՏԱՐԱԳԸ ԾԻԾԵՌՆԱՎԱՆՔՈՒՄ

«Յետ [եւ յետ] այսորիկ արշաւանս
առնէր յաշխարհն Սիւնեաց
եւ գերի վարեալ զԲաղացն սահմանս՝
գայ իջանէ յԱղահեջ [յԱղահեջ] գաւառ՝
յաւան մի՝ Արքուզետ (Աղավն-Ձաբուղ)
կոչեցեալ, եւ իսկոյն հրամայէ այրել
գեկեղեցին, որ Սրբոյն Գիորգայ [Գրիգորի,
Գրիգորկայ] էր անուանադրեալ»:
Մովսէս Կաղանկատվացի.
**Ըստ «Աղուանից աշխարհի
պատմութիւն» գրքի**

Անցավ 5 տարի, ինչ կրկին գերության մեջ է Ծիծեռնավանքը: 2020թ. սեպտեմբերի 26-ին Արցախի Քաջաթաղի շրջանի Ծիծեռնավանք գյուղում գտնվող համանուն վանական համալիրի Սուրբ Գևորգ տաճարում, որը կառուցվել է 4-րդ դարում, ինչպես նշում են շատ մասնագետներ, նախաքրիստոնեական տաճարի հիմքերի վրա, մատուցվեց Սուրբ Ամնահ Պատարագ: Սուրբ Գևորգ տաճարի վերականգնումից ու օծումից հետո (Ծիծեռնավանքի վերականգնողական աշխատանքներն ու վերածումն իրականաց-

վել են 1998-2001 թթ.) ամեն տարի սեպտեմբերի վերջին կիրակի այստեղ նշվում էր Սուրբ Գևորգ զորավարի օրը: 2020-ի սեպտեմբերի 26-ին տաճարում, չնայած Կորոնավիրուսին, Սուրբ Ամնահ պատարագը մատուցվեց Քաջաթաղի երիտասարդ հոգևոր առաջնորդ Տեր Բենիամին քահանա Ծատուրյանի ձեռամբ՝ սարկավագների և այլ հոգևորականների օգնությամբ: Հոգևոր արարողությանը մասնակցում էր նաև Բերծորի Սուրբ Համբարձման եկեղեցու (հիմնահատակ ավերվել է թշնամու կողմից 2023թ.) երգչախումբը՝ Հասմիկ Գրիգորյանի ղեկավարությամբ: Երկհազարամյա վանքի ուխտավորները Ստեփանակերտից էին,



Բերծորից, Ծիծեռնավանք գյուղից, մոտակա բնակավայրերից, այլ վայրերից: Ներկա էին նաև Քաջաթաղի շրջվարչակազմի ղեկավարի պաշտոնակատար Մուշեղ Ալավերդյանը, Ծիծեռնավանքի համայնքապետ, արդեն երջանկահիշատակ Սիմոն Զարությունյանը: Մեծ ոգևորություն էր տիրում, ուրախ էինք բոլորս: Եվ լուսանկարում էի, և՛ տեսանկարահանում:

Սակայն հաջորդ լույսը բացվեց պատերազմի բոթով: Ու հարյուրավոր քաջաթաղցիներ, թողած աշխատանք, տուն ու տեղ, Հայոց մնացած քաջերի շարքերը համալրեցին՝ պաշտպանելու տունն հայի: 44 և ավելի օր կռվեցինք, ու Քաջաթաղի հյուսիսային հատվածը՝ բուն պատմական Սյունիքի

Աղահեճք ու Արցախի Վայկունիք գավառները, թշնամին չկարողացավ գրավել. քաջաթաղցի հերոսները թույլ չտվեցին: Մերն էր նաև Ծիծեռնավանքը: Հույս ունեինք՝ Ծիծեռնավանքում ու Դադիվանքում շարունակվելու են հոգևոր արարողությունները, սակայն առանց կրակոցի մեր երկիրը համեցնեցինք թշնամուն: 2020թ. նոյեմբերի վերջին Ծիծեռնավանքի Սուրբ Գևորգ տաճարի կամարների տակ հնչեց հայի վերջին աղոթքը, հոգևորականի վերջին խոսքը: Սիրտ չարեցի մասնակցել Խորհրդավոր ընթրիքի տպավորությունը տվող վերջին պատարագին: Հայի կողմից վերջին համբույր դրոշմվեց սրբատան սյուներից, խաչերից, Սուրբ Խորանին:

Այժմ գերության մեջ է ողջ Արցախը՝ Ծիծեռնավանքով հանդերձ: Գերության մեջ է նաև Սուրբ Գևորգի հոգին: Գերության մեջ են հազարավոր քաջորդիների շիրիմները, իսկ հոգիները՝ անհանգիստ, սպասող, կանչող...

Ջոհրաբ ԸՈՔՈՅԱՆ

ՀՈԳՈՒՄ ՏԱՃԱՐԸ

Արցախցի թոշակառու մանկավարժ Սուրայա Ղազարյանը մասնակցել է «Արարատյան արժեքների կրթական հիմնադրամ»-ի կազմակերպած «Իմ եկեղեցին» խորագրով մրցույթին և արժանացել առաջին կարգի մրցանակի «Լավագույն միտք» անվանակարգում: Ծնորհավորում ենք և ստորև ներկայացնում նրա «Իմ հոգու տաճարը» ստեղծագործությունը:



Սրտիս եռքը քեզ համար է,
Հոգուս ճիչը քեզ համար է,
Քեզ համար է տվայտանքս,
Քեզ համար է երազանքս...
Ա՛խ, ե՛րբ պիտի մին էլ տեսնեմ...

Ծնվել ու հասակ եմ առել աշխարհագրական մի այնպիսի տարածքում, որը խորհրդային տիրապետության շրջանում հայտնի էր որպես աթեիզմի բացառիկ կենտրոն: Երջապատում եկեղեցի չկար, խուճկ ու մոմ չէինք վառում, ծնողներս չէին աղոթում, մենք՝ նույնպես: Ուխտի չէինք գնում, պաս

չէինք պահում. չգիտեինք՝ Սուրբ ծնունդն ինչ է, Ջատիկն ինչ է, Վարդավառը՝ ինչ, Հայր մերը՝ ինչ...

Մի խոսքով՝ այս բոլոր ավանդույթներն ու սովորույթները, եկեղեցական տոները չէինք պահպանում, սակայն յուրաքանչյուրիս երկրորդ բառը առնչվում էր Արարչի հետ. ա՛խ, Աստված ջան, օգնիր, Աստված տա, Աստված քեզ հետ, Աստված հասցնի, Աստված մեծ է, Աստծո պահածն է և այլն:

Առանց եկեղեցու գոյության, առանց աղոթքի և ուխտի, առանց ծիսական որևէ արարողության բո-

լորս Արցախում ունեինք մեր Աստվածը ու մեր հոգու եկեղեցին, մեր հավատն ու հավատամքը: Անծանոթին հյուրասիրում էինք հարազատի պես ու օթևան տալիս, ներության մեջ գտնվողին ձեռք էինք հասցնում, անպաշտպանին՝ պաշտպանում, դժբախտության մեջ գտնվողին՝ ցավակցում ու մխիթարում, հարևանին՝ աջակցում, բերք ու բարիքից բաժին հանում, վիրավորին՝ սփոփում, հիվանդին՝ առողջություն մաղթում, մեծերին՝ օգնում, անհաշտ փոքրերին՝ խաղաղեցնում, մոլեգնածին՝ հանդարտեցնում, անհաշտին հաշտեցնում, ուրիշի խինդով՝ ցնծում...

Եթե մարդ իր կյանքում այսպես է ապրում, ուրեմն նրա հոգուն 100-ավոր եկեղեցիներ են գործում, և պարտադիր չէ նրանց ֆիզիկական գոյությունը: Այսպես առանց եկեղեցու ապրում էինք, սակայն ունեինք մեր սրբավայրերը՝ հիմնականում ժայռափոր, ուր ամեն առիթով ուխտի էինք գնում՝ զավակ չունեցողին պտղավորվելու, հիվանդին բուժվե-

լու, զինվոր որդուն պաշտպանելու, զավակներին երջանկություն մաղթելու, շրջանավարտի երազանքն իրականացնելու և, վերջապես, Արցախյան պատերազմներից հայրենյաց պաշտպանի ողջ ու առողջ վերադարձի ակնկալիքով...

Չունեինք եկեղեցի, բայց բոլորս ապրում էինք Աստծո հետ կողք կողքի՝ երբեք չհակառակվելով նրա պատվիրաններին:

Արցախյան գոյամարտը դարձավ ոչ միայն մեր ֆիզիկական անկյալության առեւակատչյան, այլև խորհրդային հազարավոր կապանքներից մեր հոգևոր աշխարհի վերածնունդը:

Դարերի փոշուց ու անտարբերության բազմաշերտ ծածկոցի տակից վեր հանեցին Սուրբ Ղազանչեցոցը, Կանաչ եկեղեցին, Գանձասարը, Դադիվանքը, Ամարասը և մյուս սրբությունները, կառուցվեցին մոտերը, ու մենք սկսեցինք ապրել իսկական հայ քրիստոնյայի պես՝ հարստացնելով մեր հոգևոր արժեքները: Դպրոցներում

սկսեցին դասավանդել «Հայոց եկեղեցու պատմություն» առարկան, սիրով Սուրբ ծնունդ, Ջատիկ, Վարդավառ էինք տոնում, Թարգմանչաց տոն նշում: Դրանով մեր սաները և մենք կարողացանք հագեցնել մեր հոգու պապակը: Համարյա ամեն տարի այդ առարկայից մեր դպրոցը հաղթող էր ունենում օլիմպիադայի ՀՀ համրապետական փուլում: 2010-ականներին էլ հայոց լեզվից օլիմպիադայում հաղթող սանիս հետ հնարավորություն ունեցա այցելելու Վարդաշապատի Գևորգյան ճեմարան (համրապետական փուլն էր), որտեղ մոտիկից առնչվեցինք Մայր Աթոռին, Սուրբ Գայանե, Սուրբ Հռիփսիմե եկեղեցիներին: Շատ հպարտ ու երջանիկ էինք բոլորս:


Հայրենապաշտ ու բարերար մարդկանց ջանքերով պատրաստվում էինք փլատակներից վեր հանել ու վերականգնել Սուրբ Հակոբավանքը (արդեն ահագին աշխատանք էր կատարվել), բայց...

«ԵՐԳՈՂ ԱՐՁԱՆ» ԵՐԳՉԱՆՄԲԱՅԻՆ ՀԱՄԵՐԳԸ

1992թ. Շուշիի ազատագրումից հետո լիբանանահայ երաժիշտ ու հայրենասեր Զաքար Քեշիշյանը եկավ Արցախ ու Շուշիի «Արամ Մանուկյան» վարժարանում հիմնեց «Վարանդա» մանկապատանեկան, երիտասարդական պետական երգչախումբը, որի առաջին համերգը կայացավ Շուշիում, ապա՝ Երևանում 1993 թվականին: Ու մինչև 2020թ. սեպտեմբերին սկսված պատերազմը «Վարանդա» երգչախումբը, որ գործում էր մանկական, պատանեկան և երիտասարդական կազմերով, բազում համերգներով հանդես եկավ Արցախում, Երևանում, ՀՀ տարբեր մարզերում, արտերկրում: Սակայն եղավ պատերազմը, և Շուշին մնաց թշնամու տիրապետության տակ: Բայց «Վարանդա» երգչախումբը այդ պատերազմից հետո էլ գործեց. արդեն՝ Ստեփանակերտում: 2022թ. Արցախի մայրաքաղաքում երգչախումբը Զ. Քեշիշյանի գլխավորությամբ վերջին համերգը տվեց՝ «Երգող Արցախ» երգչախմբային ծրագրով: Արցախի հայաթափումից հետո «Վարանդա» երգչախումբը գործում է արդեն Երևանում՝ 2024-ից շարունակելով «Երգող Արցախ» երաժշտական ծրագիրը:

2025թ. սեպտեմբերի 4-ին «Վարանդա»-ի պատանի երգիչները Զ. Քեշիշյանի ղեկավարությամբ ելույթ ունեցան Արարատի մարզի Մասիս քաղաքում, 7-ին՝ Գյումրիում: Սեպտեմբերի 9-ին «Երգող Արցախ»-ը հյուրընկալվեց Երևանում՝ Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը: Սոս 6 տասնյակ պատանիներով համալրված երգչախումբը, գեղարվեստական ղեկավար ու խմբավար Զաքար Քեշիշյանի ղեկավարությամբ, Նադեժդա Հակոբյանի դաշնամուրային երաժշտության

ուղեկցությամբ, տասից ավելի երգերով, հմայեց ու ոգևորեց հանդիսատեսին: Ներկա էին ՀԱԵ Արցախի թեմի առաջնորդ, Գերաշնորհ Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանը, ԱՀ կառավարության անդամներ, հայրենի տնից բռնի տեղահանված արցախցիներ, ինչպես նաև մշակութային գործիչներ Երևանից, այլ վայրերից: «Վարանդա»-ի ներկայիս երգչախմբի անդամները հիմնականում արցախցի պատանիներ են՝ ծնունդով Արցախի տարբեր շրջաններից ու Ստեփանա-



կերտից, որ այժմ բնակվում են Երևանում և ՀՀ տարբեր մարզերում: Երևանյան համերգի ժամանակ հնչեցին արցախյան բարբառով երգեր, որոնց թվում էր արցախյան բանահյուսությունից վերցրած և Տիգրան Մանսուրյանի երաժշտությամբ «Այան մածունը մերալ ա» երգը: «Պարոն Զաքար և 40 սատանաներ» հունդրային երգը, որը գրել է Սերգեյ Մարկոսյանը՝ հատուկ «Վարանդա» երգչախմբի և «Երգող Արցախ» նախագծի համար, սիրով ընդունեց հանդիսատեսը: «Մա միակ երգ է, որն արդեն կատարվել է անցյալ տարի, և պատանի երգիչների խնդրանքով այս տարի այն կրկին ներառված է երգացանկում», - տեղեկացրեց Զ. Քեշիշյանը՝ հիշողու-

թյուն պատմելով երգի ստեղծման մասին:

Համերգի ընթացքում բեմ էին բարձրանում երգչախմբին օժանդակող անձինք՝ երգերի խոսքերի ու երաժշտության հեղինակներ, այլը: ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի նախկին ղեկան, մշտապես Արցախին աջակից Գուրգեն Մելիքյանը, ծաղկեփունջ նվիրելով երգչախմբին, կարևորեց Զ. Քեշիշյանի՝ 30 և ավելի տարիների կատարած և շարունակող աշխատանքը: Երգչախմբի կատարած յուրաքանչյուր երգից հետո ավելի էր ոգևորվում դահլիճը. յուրաքանչյուր երգ խոնարհի հույս էր ներշնչում: Բանաստեղծ Խաչիկ Մանուկյանը ներկա էր համերգին, նրա խոսքերով գրված «Արցախ» բանաստեղծությունը, իր հեղինակած երաժշտությամբ երգի է վերածել երգահան Մարտին Վարդազարյանը: Երգչախմբի կողմից հնչեց այդ երգը, և հեղինակները միասին բեմ բարձրացան, ողջունեցին Զ. Քեշիշյանի ձեռնարկը: Խ. Մանուկյանը, որի որդին մարտիրոսվել է հանուն Արցախի, հավատ ներշնչեց՝ լինելու է վերադարձ տուն՝ Արցախ: Արցախի Օրհներգով եզրափակվեց համերգը, որին նախորդեցին «Երազ իմ երկրի հայրենի...» և Պարույր Սևակի խոսքերով գրված «Հայաստան» բանաստեղծության՝ Արմենուհի Կարապետյանի գործիքավորմամբ երգերը:

Համերգը նաև առիթ էր, որ իրար երկար ժամանակ չտեսած, կարոտած արցախցիները կրկին հանդիպեցին՝ անցած լավ ու բարի հիշողություններով:

Ջոհրաբ ԸՈՔՈՅԱՆ

ՀՈԳՈՒՄ ՏԱՃԱՐԸ

1

2020 թվականին մասնավորապես և 2023-ին վերջնականապես արցախցիներս կորցրինք մեր դարավոր հոգևոր արժեքները, որ բաժին ընկան բարբարոս ու այլադավան ոսոխներին, որոնք շատ կարճ ժամանակում սեփականաշնորհեցին մեր սրբությունները...

Դարեր շարունակ հայոց եկեղեցին է հայ պահել մեր ժողովրդին: Չենք ունեցել պետություն ու պետականություն, սակայն ունեցել ենք եկեղեցի ու հայրենասեր սպասավորներ, որոնք երկրի ճակատագրական ու օրհասական պահերին կանգնել են հայրենյաց պաշտպանի կողքին, ոգևորել նրանց ու հաղթանակներ կռել: Պատմությունը հարուստ է նման օրինակներով: Հիշենք Ղազար Երեցին Ավարայրի ճակատամարտից. նա Ավարայր էր եկել և իր դասակիցներով կռվել Վարդանի կողքին: Հիշենք Սահակ Պարթևին, Մեսրոպ Մաշտոցին, Մովսես Խորենացուն, Գրիգոր Նարեկացուն, Ներսես Շնորհալուն, Սարգսրապատի ճակատամարտի ժամանակ խրամատից խրամատ շրջող ու մարտիկին խրախուսող Գարեգին սրբազանին, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցին, որին փորձում էին կաթողիկոսության հետ միասին տեղափոխել անվտանգ վայր, երբ թուրքը, գրավելով Ալեքսանդրապոլը, մոտեցել էր Եջմիածնին: Սակայն նա հրաժարվել է՝ գերադասելով իր մահը տեսնել Մայր Աթոռում. «Եթե հայ ժողովուրդը չի կարող թշնամու առաջխաղացումը կասեցնել, եթե ի գորու չէ փրկելու մեր սրբությունները, ապա ես ինքս սուր կվերցնեմ և կընկնեմ Մայր Տաճարի գավիթում, բայց չեմ հեռանա պապերից ավանդ մնացած Սուրբ Աթոռից»:

Արցախյան պատերազմների տարիներին ականատես եմ եղել, թե ինչպես էին երիտասարդ հոգևորականները մեր զինվորների կողքին մարտնչում Արցախի ազատության համար: Նրանք են ամուր պահել մեր հավատը՝ շատ հաճախ դառնալով ոսոխի գնդակի բաժին:

Հարագատ գյուղիս սրբավայրը՝ Մեծ Նանը, իր զորությամբ միշտ հեռու է պահել մեզ վտանգներից: Գտնվելով անմատչելի վայրում՝ ոչ ոք երբեք չի տուժել նրա վտանգավոր ճանապարհների պատճառով: Մեծ էր մեր հավատը նրա զորության հանդեպ: Արցախի համարյա բոլոր բնակավայրերում էլ ունեցել են իրենց սրբատեղիները, որ Նահապետակ էին կոչում:

2023 թվականի բռնի տեղահանությունից հետո իմ եկեղեցին՝ իմ Սրբությունը, մնաց հեռուներում՝ մշուշոտ ու սեզ սարերում, մութ ու թավ անտառներում, սառնորակ աղբյուրների պաղ ու ջինջ ջրերում, մանկությանս անդաստաններում, պատանեկությանս վառ ու գունեղ երևակայություններում ու ծերությանս թախծոտ ոլորաններում...

Հիմա այնտեղ ոսոխն է վիտում:

Այս խոր ցավի ու կարոտի օվկիանի միջից ուզում եմ գոչել. - Կանգ առ, ազգուրաց դավաճան, այս Հայրենիքն էլ ես գալլերի բաժին դարձնում... Սերունդները չեն ներելու, անձեռով են հիշելու ողջ տոհմը...

Իմ եկեղեցին հավերժ է ու անասան, հավատս ամուր է, և ոչինչ ու ոչ ոք չի կարող փլել Հոգուս Տաճարը:

Ամեն անգամ մոմ վառելիս Աստծուց մի բան եմ խնդրում՝ վերադարձու՛ իմ եկեղեցիների եկեղեցին՝ Արցախս...

ՈՐ ԶՄԱՐԻ ՀՈՒՅՄԻ ԿՐԱԿԸ

Միայն երախտագիտության խոսքերով կարելի է արտահայտվել այն մարդկանց մասին, որոնք ամեն կերպ աշխատում են ուրիշների երջանիկ պահեր պարգևել, ովքեր իրենց հոգում անթեղած կրակը ջահ են դարձնում՝ այլոց ճանապարհը լուսավորելու համար, ովքեր փորձում են հայրենակարոտ հայրենակիցների սրտում միշտ վառ պահել հայրենի բնօրրանի մասին քաղցր հուշերը և նրանց հոգում ապրեցնել հարազատ օջախների վերադառնալու նվիրական ծգտումները: Մարդիկ, որոնք մանուկների ու պատանիների՝ կարոտով ու թախծով լեցուն աչքերում փորձում են արևի ճաճանքներ տեսնել ու լուսե պապգայի հուսառատ աստղերը վառել:

Երգը մարդկային հոգու բացառիկ ճիչն է՝ ապրածի ու զգացածի մասին: Մարդու ներաշխարհից երգը ժայթքում է հրաբխի պես՝ շուրջը սփռելով շատ ջերմ ու տաք զգացմունքների հեղեղը: Երգով են դյուքներ ու խաղաղվում կարոտած հոգիները, դառնում անվրդով:

Պատահական չէ, որ Երևանի Կամերային երաժշտության տանը կայացած «Վարանդա» երգչախմբի համերգի ժամանակ խմբավարը՝ լիբանանահայ Զաքար Քեշիշյանը, այսպես է արտահայտվել. «Երգում ենք, որ Արցախի հողը զգա մեր երգի թրթիռը... Մեր հոգեխոսը մեղմելու համար մենք պիտի շարունակենք երգել... Պիտի հավատանք, որ բարու և արդարության հաղթանակը միայն հեթաթների մեջ չէ...»:

Նվիրյալ խմբավարը Արցախում էր հեռավոր 1992 թվականից, երբ նրա նախա-

ծեմնությամբ ստեղծվեց «Վարանդա» երգչախումբը՝ Արցախի տարբեր շրջաններից եկած երեխաների կազմով: Խումբը համերգաշարերով հանդես է եկել աշխարհի տարբեր բեմերում՝ պարգևելով մարդկանց արցախյան համով-հոտով հագեցած ջերմ ու կարոտաբաղձ զգացողություններ: Շուշիի ազատագրումն ու «Վարանդա» երգչախումբը տարեկիցներ են: «Երգող Արցախ»-ը շարունակում է իր գործունեությունը Արցախի հայաթափումից հետո: Չնայած այն հանգամանքին, որ արցախցիները ցրված են Հայաստանի մարզերով մեկ, այնուամենայնիվ, երեխաները սիրով հաճախում են երգչախմբի պարապմունքներին, հագեցնում իրենց հոգևոր (նաև արցախյան) ծառավը՝ հաճելի ակնթարթներ պարգևելով Արցախացավով տառապող մեր հայրենակիցներին (ծնողներ, հարազատներ, ԱՀ կառավարության անդամներ, հոգևոր հովիվ, որդեկորույս ծնողներ, երգերի խոսքի ու երաժշտության հեղինակներ, ՀՀ հայտնի կոմպոզիտորներ ու բանաստեղծներ):

Հաճելի էր տեսնել մեր երգող երեխաների ու նրանց ծնողների ոգևորությունը, նվիրումը. թախծոտ հպարտություն էր ծորում նրանց դեմքերից:

Տպավորիչ էր մանավանդ այն հանգամանքը, որ Կամերային երաժշտության տանը հանդիպեցի համագյուղացիներ (խնապատցի) Օլյա Մկրտչյանին ու Լուսինե Խաչատրյանին, որոնց երեխաները ևս ընդգրկված են այդ երգչախմբում ու երգում էին:

Արցախի բանահյուսության, բառ ու բանի համը ու հոտը պարուրել էր դահլիճի

մթնոլորտը և ստեղծել այն տպավորությունը, որ գտնվում ենք հայրենի եզերքում...

Տիգրան Մանսուրյանի երաժշտությամբ և Արցախի բանահյուսությունից առած «Այան մածունը մերալ ա» երգը ուրախության պահեր պարգևեց ներկաներին:

Համերգի ընթացքում երաժշտության ու խոսքի հեղինակների ելույթներով (Խաչիկ Մանուկյան, Գուրգեն Մելիքյան, Մարտին Վարդազարյան, Տիգրան Մանսուրյան և այլք) ընդմիջումները, որ միմիայն շնորհակալական խոսքեր էին՝ ուղղված նվիրյալ խմբավար Զաքար Քեշիշյանին ու շնորհալի երեխաներին, ստեղծել էին մի անուշաբույր համաձուլվածք՝ կատարյալ ներդաշնակությամբ:

Արցախի բարբառով հնչող երգերը համեմուն էին ողջ երեկոն ու կլանում ունկնդիրներին:

Երևանի Կամերային երաժշտության տունն այդ պահին վերածվել էր մի փոքրիկ Արցախի, որտեղ հավաքվել էին 2023-ի սեպտեմբերին բռնի տեղահանված և երկու տարվա պարտադրված բաժանումից չափազանց կարոտած ընկերներ, բարեկամներ, ծանոթ-անծանոթներ: Լքված հայրենի բնօրրանից՝ լցված սրտերով իրար էինք նայում ու խոսքեր չէինք գտնում... Ճակատագրի դառը քնահաճույքները ինչո՞ւ հենց մեզ բաժին հասան...

Ողջ երեկոյի ընթացքում երեխաների շուրթերից հնչող երգերի արցախյան համը ու հոտը վայելում էինք բոլորս:

Վերջում «Երգող Արցախ»-ին միացան վարանդացի նախկին սաները, որ մեծացել,

արդեն ընտանիք էին կազմել ու ներկայացել էին մույնիսկ մանկահասակ երեխաների հետ, չէին մոռացել իրենց սիրելի ուսուցիչ-խմբավարին: Միացան ու կարոտած սրտերով երգեցին «Երազ իմ երկրի հայրենի»-ն ու վերջում, որպես խոր երախտագիտության վառ դրսևորում, կատարեցին «Իմ ուսուցիչ» երգը: Հուզումնալից էր պահը. խմբավարը սիրով մոտենում էր ու գրկում բոլորին:

Իսկ երբ երեխաները հնչեցրին Արցախի օրհներգը, դահլիճը հոտնկայս միացավ երգչախմբին: Մեր կարոտի երգը.

Ազատ ու անկախ Արցախ,
Քո տուն-մորուց երեխաներից,
Պատմությունը մեր երկրի
Մեր սուրբ արյամբ մենք սերտեցինք:

Դու բերդ ես անառիկ,
Բարձունք սրբազան, վեհ անուն,
Մասունք աստվածային,
Քեզնով ենք հավերժանում...

Դահլիճի հուզմունքից զատ, թերևս, շատերը չնկատեցին, թե «Երգող Արցախ» երգչախմբի առաջին շարքի մի քանի մասնակիցների՝ ամենափոքրների անմեղ աչքերից ինչպես էին հոսում արցունքի մարգարիտներ... Մամուկների զգայնությունն ավելի ակնառու էր:

Երեկոն ևս մեկ հավատ, հույս ներշնչեց, որ Արցախն ապրում է, և նվիրյալ մարդկանց շնորհիվ անմար են պահվում վերադարձի հույսի կրակները:

Սուրայա ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՊԳԻՏԱԿԱՆ

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐՈՎ ՀԱՐՈՒՄՑ ՀՆԱԿԱՅՐ

Հարցազրույց ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող Մարգար ՀԱՄԱՅԱԿՅԱՆԻ հետ



- Պարոն Հմայակյան, Նոր Արմավիր բնակավայրում ե՞րբ են սկսվել հնագիտական ուսումնասիրություններն ու պեղումները:

- Նոր Արմավիրի բնակավայրի և դամբարանադաշտի պարբերական պեղումները սկսվել են 2012 թվականից Սիմոն Հմայակյանի ղեկավարած արշավախմբի կողմից: Այստեղ դեռևս 1960-ական թթ. Հնագիտության և ազգագրության ինստիտուտի (ՀԱԻ)՝ Հարություն Մարտիրոսյանի և այնուհետև Ռաֆիկ Թորոսյանի ղեկավարած արշավախումբը իրականացրել է պեղումներ և հայտնաբերել մի քանի կարասային դամբարաններ և մեկ սարկոֆագային թաղում: Բայց քանի որ արշավախմբի բուն նպատակը Արգիշթիսի թագավորի արևմտյան ամրոցի (Դավթի բլուրի) ուսումնասիրությունն էր, այստեղ հետազոտությունները մնացին անավարտ: Մի քանի անգամ, սակայն, 1982, 1986 և 1990-ական թթ. Նոր Արմավիրի բնակելի տների հողատարածքներից պատահաբար բացվել են դամբարաններ, որոնք պեղվել և հետազոտվել են ՀԱԻ՝ այդ դեպքում Արմավիրի արշավախմբի կողմից:

- Պ. Գ. Բ., ՀԱԻ ավագ գիտաշխատող Սիմոն Հմայակյանի ղեկավարությամբ ո՞ր թվականից են այդ բնակավայրում իրականացվում հնագիտական ուսումնասիրություններն ու պեղումները:

- Հիմք ունենալով խորհրդային տարիներին Նոր Արմավիրից գտնված դամբարանները՝ 2012թ. ձևավորվեց ՀՀ ԳԱԱ ՀԱԻ Նոր Արմավիրի հնագիտական արշավախումբը, որի հիմնական անդամներն են՝ արշավախմբի ղեկավար Սիմոն Հմայակյանը, պեղող հնագետներ Նվարդ Տիրացյանը և ես: Արշավախմբի 14-ամյա գործունեության արդյունքում այժմյան Նոր Արմավիր գյուղի տարածքից պեղվեց 27 դամբարան՝ 61 անձանց բազմատեսակ ծեսերով ուղեկցված թաղումներով: Գտնվեցին նաև շինությունների պատեր, փարախ, պաշտամունքային տաղավար և այլն: Թաղումների մեծ մասն արշավա-

խումբը հայտնաբերեց Նոր Արմավիրի «Լևոնի այգի» անվանված թիվ 3 հնագիտական տեղամասում, որը գտնվում է Հովհաննիսյանների ընտանիքին պատկանող տնամերձ մեծ այգում: Հայտնաբերված նյութերի հնագիտական և հնամարդաբանական ուսումնասիրությունների միջոցով (հնամարդաբան՝ Անահիտ Խուդավերդյան), արշավախումբը պարզեց, որ այստեղ դամբարաններն ունեն թվագրման երկու սանդղակ՝ 1. Մ.թ.ա. 8-7-րդ դարի ուրարտական շրջան, 2. Մ.թ.ա. 6-րդ դարով թվագրված վաղ Երվանդունիների ժամանակաշրջան: Ուրարտական դամբարանները գտնվել են 2,7-3 մ խորությունից և պատկանում են այժմյան Նոր Արմավիրին կից Արգիշթիսի թագավորի արևմտյան ամրոցի բնակիչներին, իսկ մ.թ.ա. 6-րդ դարի դամբարանները պատկանել են այստեղ գյուղ հիմնած մարդկանց, որոնց թվում են նաև արևմտյան բլուրը լքած որոշ խմբեր: Ըստ կատարված հնագիտական պեղումների՝ հուդարկավորությունները գտնվում են բնակելի և գյուղատնտեսական շինությունների անմիջական հարևանությամբ: Հայտնաբերված թաղման գույքը տպավորիչ է. ոսկյա, արծաթյա և բրոնզե զարդեր (ակամջողներ, ապարանջաններ, մագակալներ), վզնոցների զարդամասեր՝ պատրաստված սերդուլիկից, շաղախից և ոսկրից, ինչպես նաև դաշույններ, խնամքի պարագաներ, տարբեր նյութերից պատրաստված կնիք-կախիկներ, բազմատեսակ կավանոթներ և այլն:

- 2024-ին Հովհաննիսյանների այգում կատարված պեղումները շարունակվեցին 2025-ին, ովքե՞ր էին մասնակցում այդ աշխատանքներին, ի՞նչ մոդ բացահայտումներ եղան:

- 2025 թ. արշավախմբի կազմում էին Ս. Հմայակյանը, Մ. Հմայակյանը, Ն. Հովհաննիսյանը, Ի. Հովսեփյանը և Ա. Մուրադյանը: Այստեղ՝ նույն Լևոնի այգի տեղամասի Խ-8 փոսորկայում, 2024թ. բացվել էր մ.թ.ա. 6-րդ դ. հիմնահողային դամբարան՝ հինգ անձանց թաղումներով: Այս դամբարանն առանձնահատուկ էր, քանի որ թաղման գույքը ոչ թե դրված էր հանգուցյալների կողքին կամ նրանց վրա, այլ ասես շաղ էր տրված դամբարանով մեկ: Կմախքներն էլ վնասված էին. հանգուցյալ-

ներից մեկի կոնքը, օրինակ, հայտնվել էր գանգի մոտ, որը կարող է նշանակել, որ դամբարանը կողոպտել են:

Պեղումային տարվա վերջին օրերին դամբարանի մաքրման ժամանակ բացվեց մեկ այլ թաղում, որի պեղումները որոշվեց թողնել 2025թ.: Այս տարի բացված դամբարանի իրադրությունն էլ առավել հետաքրքիր էր. այստեղ բացվել էր 4 թաղում, որոնցից երկուսը գլխի առանձին հուղարկավորություն էր, մյուսը հիմնահողային՝ թերևս մոր և մանկան: Վերջինիս դեպքում մեծահասակը դեմքով պառկած էր աջ կողքի վրա և այդպես, ըստ համեմատական վերլուծության, հիմնականում հուդարկավորում էին տղամարդկանց, բայց հաշվի առնելով, որ հանգուցյալի գրկին երեխա կար, ենթադրաբար թաղումը պատկանել է կնոջ: Ուշագրավ էր նաև, որ կինը ծախ ականջի վրա կրում էր 10 բրոնզե ականջօղ, որոնցից հիմա գրկին կանգնած էին, իսկ մնացյալը՝ իրենց ձեռք տարբեր էին: Այս թաղումների տակ գտնվեց ևս մի հիմնահողային թաղում՝ բաղկացած երկու անձից: Հանգուցյալներից մեկի դեմքը ասես դեֆորմացված լիներ, ըստ երևույթին ուներ լուրջ հիվանդություն, որը կպարզվի հնամարդաբանական հետազոտություններից հետո: Այս թաղումներից շուրջ 3մ արևելք բացվեց երեք անձից բաղկացած դամբարան: Ըստ նախնական հետազոտության՝ այստեղ հուդարկավորվել են ամուսիններ և նրանց միջակայքում՝ առավելապես մորը հպված դեռահաս երեխա: Դամբարանից ևս գտնվեցին կավանոթներ, զարդեր, իսկ երեխայի կողոսկրների տակից գտնվեցին երկու կնիք-կախիկներ, որոնք, հատակի մասում կրում էին թերևս գիշատիչ կենդանիների և երկրաչափական մոտիվներով խորադիր պատկերներ: Թաղումները բացվեցին տեղամասին բնորոշ՝ մ.թ.ա. 6-րդ դարին հատուկ մշակութային հորիզոնում:

- Պեղումները շարունակվելու՞ են:


- Ծրագրում ենք պեղումները շարունակել հաջորդ տարի ևս, քանի որ, հաշվի առնելով նախորդ տարիներին այս տեղամասում ունեցած հետազոտությունների արդյունքները (27 դամբարան 61 անձանց թաղումներով), ակնկալում ենք, որ այստեղից կրկին դամբարաններ և գուցե այլ բնույթի հուշարձաններ ևս կհայտնաբերվեն:

Հարցազրույցը՝ Զոհրաբ ԸՈՔՈՅԱՆԻ

2023թ. սեպտեմբերյան Հերոս-մարտիրոսներ

ՀԱՎԵՐԺ ԶԻՆՎՈՐ ԱՐՍԵՆԸ

Արցախյան վերջին պատերազմը, որ սկսվեց 2023թ. սեպտեմբերի 19-ին, իր հետ 200-ից ավելի քաջորդի տարավ: Քաջեր, որոնք իրենց կյանքի գնով փորձում էին տեր մնալ հայրենի Արցախին: Ինչ խոսք, այդ 2-3 օրերի ընթացքում մեր քաջորդիները հասցրեցին մեծ կորուստ պատճառել թշնամուն, սակայն ուժերի մի քանի տասնյակ անգամ անհավասար լինելն ու քաղաքական խաղերն իրենց դերն ունեցան: 2023թ. սեպտեմբերի վերջին օրերին Եռաբլուրում ու այլ հանգստարաններում կրկին հնչեցին կրակահերթեր, ու քաջ նահատակ զինվորին վայել ձևով մայր հողին հանձնեցինք հերթական Ամմահ հերոսներին, որոնք համալրեցին Ամմահների լուսե բանակը:



Սեպտեմբերի 29-ին Եռաբլուրում հուղարկավորվեց Ասկերան քաղաքում ծնված ու դեռ 20-ը չբոլորած Արսեն Առստամյանը: Արցախյան առաջին գոյամարտի տարիներին Արցախում բնակվող զրեթե բոլոր տղամարդիկ մասնակից եղան մարտական գործողությունների: Շատերը նահատակվեցին, եղան բազում վիրավորներ, հաշմանդամներ: Ասկերանցի Էռեստ Առստամյանը նույնպես անմասն չմնաց պատերազմին մասնակցելուց և մարտական հատուկ գործողության կատարելիս դարձավ հաշմանդամ: Հերոս ամուսնու հիմնական հենարանը կինն էր՝ Մարգարիտա Սեյրանյանը: 2004թ. հոկտեմբերի 20-ին ծնվեց նրանց միակ որդին՝ Արսենը՝ Ամմայի ու Անգելիմայի եղբայրը: Հոր ու հարևանների, հարազատների պատմածներն Արցախյան գոյամարտի մասին տպավորվել էին դեռ մանուկ Արսենի հոգում: 2010թ. Արսենն ընդունվել է Ասկերանի Էդմոն Բարսեղյանի անվան միջնակարգ դպրոց: Արցախյան դպրոցներում հաճախ էին կազմակերպվում ցերեկայիններ, այլ միջոցառումներ՝ նվիրված Արցախյան գոյամարտի հերոսական անցքերին, նահատակ ու ողջ մնացած քաջորդիներին: Երևի դա ազդել էր Արսենի վրա, որ 2019-ին, ստանալով հիմնական կրթություն, ուսումը շարունակել է Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանին կից գործող քոլեջի ՆՁՊ բաժնում: Նպատակ է ունեցել նաև բարձրագույն կրթություն ստանալ նույն համալսարանում՝ հետագայում ռազմական գիտելիքները սերմանելու դպրոցականների մեջ: 2023-ի հունվարին զորակոչվել է ԱՀ Պաշտպանության բանակ՝ ծառայության անցնելով հրետանային զնդում: Չմայած ոչ երկար ժամանակ ծառայելուն՝ Արսենն արդեն արհեստավարժ հրետանավոր էր ու հայրենիքին նվիրված զինվոր:

2023թ. սեպտեմբերի 19-ին նրանց մարտկոցը գտնվում էր Ասկերանից 7-8կմ հեռու: Հայրենի քաղաքն ու իր հարազատներին էր քաջորդին պաշտպանում մարտական ընկերների հետ՝ մոռացած անձնականը: Հենց առաջին պահից Արսենն էր մարտկոցը մեծ կորուստներ պատճառեց առաջ եկող թշնամուն: Ըստ տեղեկությունների՝ թշնամին հերոսական մարտկոցի տեղը գտնելու համար օգտագործել է անօդաչու թռչող սարքեր, որոնք էլ հետախուզել են տարածքը: Այդ ընթացքում հրետանավորներին զինամթերք բերող մեքենան մոտեցել է մարտկոցի հենակետին: Թշնամին հասցրել է ԱԹՍ-ի միջոցով հարված հասցնել արդեն դիրքին մոտեցած մեքենային: Պայթել են մեքենայում գտնվող արկերը, որոնց բեկորներից էլ նահատակվել է հրետանավոր Արսենը, որը շտապում էր օգնել վիրավոր ընկերոջը:

Նահատակվեց քաջորդին՝ այդպես էլ չդառնալով Արցախի դպրոցներից մեկի զինղեկը, ծնողներին թող պարզևսող և երանելի է, որ չտեսավ հայրենի երկրի կորուստը:

Զ. ԸՈՔՈՅԱՆ

2023Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՐՈՍ-ՄԱՐՏԻՐՈՒՄՆԵՐ

ՈՐ ԱՐՅԱՆԸ ՄԱՐ



կությանը զրահատեխնիկա, անօդաչու սարքեր, հրետանի և այլն: Արցախի պաշտպանները մի քանի օր հերոսաբար պաշտպանեցին հայրենի երկրի սահմանները, մեծ կորուստ պատճառեցին թշնամուն,

Արցախյան վերջին ողբերգական իրադարձությունների շրջանակում առավել ծանր է հայրենի հողը պաշտպանելիս նահատակված տղաների անդառնալի կորուստը: 2023թ. սեպտեմբերի 19-ին թշնամին հերթական լայնածավալ հարձակումն սկսեց Արցախի ողջ սահմանով: Չնայած ռուս-խաղաղապահների գոյությանը՝ մարտերը տևեցին մի քանի օր: Ըստ որոշ լուրերի՝ թշնամին հարձակման էր անցել՝ մարտադաշտ բերելով 60 հազար զինվոր, մեծ քանա-

բայց... 200-ից ավելի քաջորդիներ համալրեցին Անմահների լուսե բանակը:

Հերոսական այդ օրերին Անմահի փառքով իրեն պսակեց նաև Տիգրան Կարենի Ավանեսյանը, և նրան իսկական զինվոր-հերոսին վայել հուղարկավորեցին «Եռաբլուր» զինվորական պանթեոնում՝ հեռու հայրենի Ասկերան քաղաքից, որը մնաց թշնամու տիրապետության տակ: Ներկա էին հերոսի հարազատները, մարտական ընկերներ, սպայական կազմի

ներկայացուցիչներ, բռնի տեղահանված արցախցիներ...

Տիգրան Ավանեսյանը ծնվել է 1996թ. մայիսի 15-ին Ասկերան քաղաքում: Արցախյան առաջին գոյամարտի մասնակից ու հաշմանդամ Կարեն Ավանեսյանի ու Ռուզաննա Ավանեսյանի առաջնեկն էր, օջախի կրակը վառ պահողը: Մանկուց աչքի էր ընկնում խելացիությամբ: 2003-2014թթ. ընդունվել և ավարտել է Ասկերան քաղաքի Էդմոն Բարսեղյանի անվան միջնակարգ դպրոցը: Ուսման ողջ տարիներին իրեն դրսևորել է որպես բանիմաց ու սիրելի աշակերտ, ընկեր, զավակ: Ծնողները, տատը՝ Ալինա Ավանեսյանը, քույրը՝ Էլինան, միշտ հպարտ էին Տիգրանով: Ավարտելով միջնակարգը՝ Տիգրանը ընդունվել է Արցախի պետական համալսարանի ֆինանսներ և կառավարում բաժինը: 2015-2017թթ. զորակոչվել է Արցախի Պաշտպանական բա-

նակ՝ ծառայության անցնելով Ն գորամասում: Մասնակցել է 2016թ. Ապրիլյան պատերազմին: Զորացրվելուց հետո ուսումը շարունակել է Ստեփանակերտի «Մեսրոպ Մաշտոց» համալսարանում՝ նույն մասնագիտությամբ: 2022թ. հունիսից ծառայության է անցել ԱՀ ԱԱԾ հատուկ նշանակության ջոկատում: 2023-ի հուլիսի 8-ին կայացավ Տիգրանի ու Ալիսա Հարությունյանի հարսանիքը՝ իհարկե, ոչ ընդունված ճոխության: Արցախի շրջափակումն իր դերը խաղաց: Այնուամենայնիվ, ուրախ էին նորապսակները, նրանց ծնողները. նոր ընտանիք ավելացավ Արցախում: Սակայն երկար չտևեց նորապսակների համատեղ կյանքը, չունեցան սպասված զավակը: 2023թ. սեպտեմբերի 19-ին Տիգրանն իր ջոկատի հետ հսկում էր շատ կարևոր դիրք՝ դեռևս Արցախյան առաջին գոյամարտում հայտնի «Պուշկին յալը»,

որի ազատագրումը 1992-93 թվականներին շատ ծանր մատեց մեզ վրա: Այս դիրքը, եթե ընկներ թշնամու ձեռքը, Մարտակերտը կհայտնվեր ծանր վիճակում: Առաջին օրը թշնամին փորձել էր գրոհով գրավել «Պուշկին յալը», սակայն դեմ էր առել հայոց քաջերի խիզախությանը: Երկրորդ գրոհից հետո թշնամին արդեն 50-ից ավելի ասկյար էր կորցրել, իսկ Տիգրանի ջոկատից վիրավորվել էին երկու քաջորդի: Հասկանալով, որ անհնար է կոտրել հայոց քաջերի դիմակայությունը հետևակի գրոհով, թշնամին սկսել էր հրետակոծել նրանց հետակետը, մինչև Տիգրանն ու իր քաջերը հարյուրավոր արկերի բեկորներից խոցվեցին ու իրենց նահատակությամբ գրեցին հերոսական ևս մեկ էջ Հայոց պատմության մեջ:

Հպարտություն է ունենալ նման զինվորներ, բայց ցավ է, երբ նույն զինվորները չունեցան օգնողներ:

ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔԻ ՍԵՐՈՐԸ



Քաջերի յարութիւնն է մահը:

Քաջերի յարութիւնն է մահը:

Հաճախ են անդրադառնում Քաջաթաղի շրջանում ծնված ու հասակ առած երեխաներին, երիտասարդներին՝ նրանց ներկայացնելով ԼԱՎԱԳՈՒՅՆ մակդիրով: Այդ երիտասարդներից էր Սերոբ Մարատի Մազուլյանը՝ բազմազավակ ընտանիքից, որն իր հայրենասիրությամբ աչքի էր ընկնում դեռևս մանկուց: Քաջաթաղի վերահայացման սկզբում Սերոբի՝ արդեն բազմազավակ ծնողները վերաբնակվեցին շրջանի հյուսիսային հատվածի Զորախաչ գյուղում, որն ընկած է Բերձոր-Քարվաճառ ճանապարհի մոտավորապես 60-րդ կիլոմետրի վրա: Պատմական Մեծ Հայքի Արցախ աշ-

խարհի Վայկունիք գավառի այս բնակավայրն ունեցել է դարերի պատմություն, որտեղ պահպանվել են միջնադարյան եկեղեցի, խաչքարեր, այլ հուշարձաններ: Մարատի և Մարգարիտայի 6-րդ զավակը ծնվեց այս գյուղում 1997թ. օգոստոսի 24-ին: Մարատն իր տղաներին հայ հայդուկ հերոսների անունով էր կնքում: Երկրորդ որդուն կոչեց Սերոբ: 2005թ. նրանց ընտանիքը տեղափոխվեց Քաջաթաղի շրջանի մեկ այլ պատմական գյուղ՝ Վաղազին, որի մասին հիշատակվում է նաև Գուշավանքի հայտնի արձանագրությունում: Վաղազինի դպրոցի բոլոր դասարաններում Մարատի 12 զավակներից կային: Դպրոցում կազմակերպված ցանկացած միջոցառում առանց նրանց չէր կայանում: «Սերոբը նույնպես համեստ ու ընկերասեր էր դպրոցում», -ստում է քույրը՝ Լիլիթը: Վաղազինի անտառապատ սարերում ու ձորերում անցան Սերոբի մանկությունը, պատանեկությունը: Եվ այս սար ու ձորերը տպվեցին նրա հոգում որպես հայրենիք, և որն էլ պետք է սիրեր, հարկ եղած դեպքում՝ պաշտպանել: Դպրոցում ստացել է հիմնական կրթություն: 2017թ. հունվարի 16-ին Քաջաթաղի շրջանային զինկոմիսարիատում հերթական գորակոչն էր: Քաջաթաղի շրջանում միշտ էլ զորակոչը կազմակերպվում էր տոնական: Զինկոմիսարիատից հետո նորակոչիկներն այցելում էին Բերձորի Սուրբ Համբարձման եկեղեցի, մոմ վառում, ստանում հոգևոր հովիվ Հայր Աթանասի օրհնանքը: Այնուհետև Բերձորի Արցախյան առաջին գոյամարտում

նահատակված հերոսներին նվիրված հուշահամալիրում ծաղիկներ էին խոնարհում և հարգում նահատակների հիշատակը: Այստեղ էլ կայանում էր երաժշտական մասը: Տասնյակ տղաների շարքում նաև Սերոբն էր՝ ծնողների, քույր-եղբայրների ուղեկցությամբ: Մշտապես լուսաբանել են շրջանային զորակոչները: «Մերան» շրջանային թերթում օրվա մասին լրատվության մեջ կա հետևյալը. «Վաղազինից բազմազավակ ծնողներ Մարատ և Մարգարիտա Մազուլյանները բանակ էին ճամփում իրենց երկրորդ որդուն՝ Սերոբին: Ունեն 12 երեխա, որից 5-ը տղաներ են: Մայրը մաղթեց, որ խաղաղություն տիրի ողջ աշխարհում, որ իր որդին և նրա ընկերները, բոլոր զինվորները ծառայեն խաղաղ պայմաններում և տուն գան ողջ ու առողջ»: Այդպես էլ եղավ. Սերոբը տուն եկավ ողջ ու առողջ: Հետո տեղափոխվեց Ստեփանակերտ՝ աշխատելու:

Արցախյան 44-օրյա պատերազմին հազարավոր քաջաթաղցիներ մասնակցեցին, որոնց շարքում էր նաև Սերոբը: Կռվեց քաջաբար, ողջ մնաց, բայց արդեն չկարողացավ Վաղազին-տուն գնալ: Պատերազմից հետո առանց կռվի թշնամուն հանձնվեց Քաջաթաղի շրջանի հյուսիսային թևը, որտեղ էր նաև Վաղազինը: Հազարավոր տեղահանվածների պես Հայաստանի Հանրապետություն տեղափոխվեցին նաև Մազուլյանները և բնակություն հաստատեցին Արարատի մարզի Տափերական գյուղում: Քույրը գրում է. «Դեռ մանկուց հայրենիքի

հանդեպ սերը շատ մեծ է եղել, և այդ պատճառով ձգտել է ծառայել իր հայրենիքում»: Երկար չմնաց Տափերականում, պայմանագրային ծառայության է անցել Արցախում՝ նշանակվելով Ն գորամասի երկրորդ գումարտակի հակատանկային մարտկոցի դասակի հրամանատարի տեղակալ: Չնայած բոլոր դժվարություններին՝ մեր տղերքը պաշտպանում էին Արցախի սահմանները: Վերջին 9-ամսյա շրջափակումն էլ չընկճեց տղերքին. հայրենին ավելի թանկ էր: Արցախյան վերջին ողբերգական իրադարձությունների շրջանակում մեծ ցավ է նաև, որ հերոսաբար կռվող շատ տղաներ կորցրինք, առավել մեծացավ համընդհանուր Եռաբլուրը:

2023թ. սեպտեմբերի 19-ին սկսվեց Արցախյան վերջին՝ կործանարար պատերազմը, երբ թշնամին տասնյակ անգամ մեծ ուժերով հարձակում գործեց Արցախի սահմանի բոլոր ուղղություններով: Հերոսաբար կռվեցին հայոց քաջերը, մեծ կորուստներ պատճառեցին թշնամուն, սակայն եղավ այն, ինչ ունենք այսօր: Սեպտեմբերի 20-ին վերջին մարտը տվեց նաև Սերոբն ու համերժ մնաց Արցախի պաշտպան: Տուն բերեցին Հերոսի դին: Սեպտեմբերի 29-ին Սերոբին հուղարկավորեցինք Եռաբլուրում՝ հերոս զինվորին վայել կարգով, նույն պատերազմում մարտիրոսված տասնյակ քաջորդիների շարքում:

Ջոհրաբ ԸՈՔՈՅԱՆ

ՇՈՒԹԱՍՏԱՅԱՆ

ՇԻՇԵՆՔ ՈՒ ԳՆԱՀԱՏԵՆՔ 44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԶՈՇԿԱԾ ՄԱՐԶԻԿՆԵՐԻՆ

Թաթուլ Զարությունյան

2020թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից հրահրված պատերազմը պատճառեց մեծ վնասներ ու կորուստներ: Ցավոք, արցախյան մարզաշխարհն անմասն չմնաց եւ ունեցավ ցավալի ու անդառնալի կորուստներ:

Շատ հայրերի նման իր կյանքը հայրենիքի պաշտպանությանը զոհեց ԶԶ-ում եւ Եվրոպայում ծանաչված արցախցի հզոր մարզիկ, Ուժային եռամարտի ԶԶ բազմակի չեմպիոն, Եվրոպայի առաջնությունների մրցանակակիր Թաթուլ Զարությունյանը:

Թաթուլ Վիգենի Զարությունյան



Երբ ծնվել է 1987թ. մայիսի 14-ին Ստեփանակերտում: Ավարտել է Ստեփանակերտի հ.6 դպրոցը: 2008-2013թթ. սովորել է «Մեսրոպ Մաշտոց» համալսարանում եւ ստացել իրավաբանի մասնագիտություն: Թաթուլը ընտանիքի միակ տղա զավակն էր, հայրը մահացել էր: 2007-2012թթ. ծառայել է ԱԶ ՊԲ ԶՕՊ-ում: 2014թ. հուլիսից դեկտեմբերը սովորել է ԶԶ ՊՆ ենթասպաների դպրոցում: 2016թ. մասնակցել է Ապրիլյան պատերազմին: 2012-2020 թթ.ծառայել է ԱԶ ՊԲ վերամորթոգման բազայում՝ որպես պահակապետ, նյութական ապահովման վաշտի բեռնաթափման եւ պահպանության դասակի հրամանատար, ավագ ենթասպա: Արցախի խաղաղ բնակչության դեմ թուրք-ադրբեջանական ուժերի սանձազերծած պատերազմի հետեւանքով 2020թ. հոկտեմբերի 2-ին ծառայության ընթացքում ստացել է մահացու բեկորային վիրավորում՝ թիկունքում թողնելով՝ իրենց տան գլուխի գալստյանն սպասող երեք նախադպրոցական զավակներին ու հղի կնոջը:

Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով:

Թաթուլ Զարությունյանը մարզական ճանապարհին սկսել էր շուրջ տասնհինգ տարի առաջ: Սիրելով սպորտը եւ լինելով պարտաճանաչ ու նպատակալաց՝ չէր նա-

հանջում ոչ մի դժվարության առջեւ: Սկսել էր ուժային եռամարտ պարապել դեռ այն ժամանակ, երբ Արցախում այդ մարզածելը նոր էր սկսում զարգանալ: Պարապմունքների էր գնում «Դինամո» մարզահամալիրում՝ մարզիչ Արկադի Զաքարյանի մոտ: 2009թ. հիմնադրվեց Ուժային եռամարտի (փաուլերիֆթինգ) ֆեդերացիան, իսկ Թաթուլը ֆեդերացիայի լավագույն մարզիկներից էր եւ մարզիչ Արկադի Զաքարյանի սիրելի սաներից մեկը: Բազմիցս մասնակցել է ՊԲ-ի կողմից կազմակերպվող մարզական միջոցառումների, ինչպես նաեւ ԶԶ-ում եւ արտերկրում կազմակերպվող ուժային եռամարտի առաջնությունների: Ինչպես ծառայության մեջ էր կարգապահ ու պարտաճանաչ, այնպես էլ սպորտում ցուցաբերում էր բարձր մակարդակ, կամք ու նպատակասլացություն: ԶԶ ուժային եռամարտի բազմակի չեմպիոն, ԶԶ ուժային եռամարտի հավաքականի անդամ էր: Թաթուլ Զարությունյանը շատ մրցանակներ ու մարզական ձեռքբերումներ ուներ: 2019թ. Եվրոպայի ուժային եռամարտի առաջնության փոխչեմպիոն էր, իսկ սեղմում պատկած դիրքից առաջնության՝ երրորդ տեղի մրցանակակիր: Մարզական ձեռքբերումների համար 2018 եւ 2019 թթ. ԱԶ նախագահի կողմից արժանացել էր պարգևների:

Թաթուլ Զարությունյանը շատ ընկերներ ու մեծ շրջապատ ուներ, բայց նրա համար առաջին տեղում



միշտ էլ ընտանիքն էր: Անուշի հետ ամուսնացել է 2013թ. օգոստոսին: 2016-ի ապրիլին ծնվել են նրանց երկվորյակ աղջիկները՝ Աննան ու Ալինան: 2017-ին ծնվել է նրանց որդին՝ Վիգենը: 2021-ի հունվարի 28-ին ծնվեց Թամարան, որին չտեսավ քաջաբար հերոսացած հայրը: Կինը՝ Անուշ Զարությունյանը, ասում է, որ Թաթուլը հավատարիմ ամուսին էր, հոգատար հայր՝ նվիրված ընտանիքին: Նա ամեն ինչ անում էր, որ երեխաները կարիք չունենան: Շատ ժամանակ էր տրամադրում երեխաների հետ զբաղվելուն, զբոսնելուն: Քանի որ ծանրորդները սովոր են աշխատել ծանր ու կոպիտ երկաթածողի հետ եւ ունեն շատ ամուր կազմվածք, հաճախ շրջապատի մոտ կարող են կոպիտ մարդու տպավորություն

թողնել: Բայց դա ընդամենը տպավորություն կարող է լինել առաջին հայացքից: Թաթուլը, չնայած խիստ բնավորության տեր, բայց հավասարակշռված, նրբանկատ, խելացի ու պարկեշտ էր: Կինը պատմում է, որ ցանկացած հարցում կարող էր օգնել իրեն, երեխաների հետ կապված ամենամուրբ հարցերում էլ գլուխ էր հանում եւ օգնում: Ամենազբաղված պահերին էլ հասնում էր:

Արցախյան 44-օրյա պատերազմի անմահ հերոսներից է մեր սիրելի մարզիկ Թաթուլ Զարությունյանը, որը քաջաբար հավերժացավ՝ միանալով իր մյուս զինակից ընկերներին: Մեր հերոսն ապրեց կարճ, բայց իր քաջության շնորհիվ թողեց մի ամբողջ կյանքի պատմություն, որը կապրեցնի նրան: Թաթուլի հարազատների կողմից Ստեփանակերտի Թումանյան 123 հասցեում գտնվող շենքի բակում կանգնեցվել էր հուշաղբյուր, որը պետք է դառնար նրա հիշատակը հավերժացնող հուշակոթող սերունդների համար: Հուշաղբյուրը պատկերում էր խաչ՝ հավատք, արծիվ՝ հզորություն, հավերժություն եւ նուր, իսկ ընդհանուր ձեւը թողնվել էր ժայռի տեսքով:

Արթուր Ասրյան

«Լուսարար»-ի մարզական էջը խորը ցավով ներկայացրել էր 44-օրյա պատերազմի հետեւանքով անմահացած եւս մեկ քաջորդու: Խոստումնալից 20-ամյա մարզիկին սպասվող մարզական հաջողությունների ծանապարհն ընդհատված էր: Մրցագործում պայքարելու հմուտ կարողությունները տեղափոխվել էին ռազմադաշտ՝ ի նպաստ հայրենիքի պաշտպանության: Մարզաշխարհում հերթական հաջողությունն ունենալու, տարբեր առաջնություններում հաղթելու կամ մրցանակային տեղ զբաղեցնելու ուրախ լուրերի փոխարեն տեղեկացել էինք նրա անհետ կորչելու, ապա՝ գոհվելու մասին:



Արթուր Արմենի Ասրյանը ծնվել է Ստեփանակերտում, սովորել է 3-րդ դպրոցում, ավարտել՝ 11-րդ դպրոցը: Ընդունվել էր ԱրՊՀ տնտեսագիտության ֆակուլտետ, որտեղ

պետք է ուսուներ շարունակել բանակում ծառայությունն ավարտելուց հետո: Պարտադիր զինվորական ծառայությունն անցնում էր ԱԶ ՊԲ ԿՊՇ-ում, որտեղից պետք է զորացրվեր 2021թ. հունվարին...

Արթուր Ասրյանը տասը տարեկանից զբաղվում էր կիոկուշինկայ կարատե մարտարվեստով՝ սկսելով մարզիչ Արմեն Պետրոսյանի մոտ եւ շարունակելով մարզիչ ու ընկեր Արթուր Առուշանյանի մոտ: Մարզիչներն անբաբույց սիրով են պատմում նրա մասին: Նպատակասլաց, կարգապահ, չընկճվող ու մարտարվեստի հետնորդին վայել՝ պայքարի մեծ ուժով օժտված մարզիկը խիզախության մարմնավորում էր, իսկական մարտիկ: Քիչ չեն նրա մարզական ձեռքբերումները հայրենիքում եւ երկրից դուրս: Կիոկուշինկայ կարատե դո առաջնությունների ԶԶ բազմակի չեմպիոն է: 2014թ. երեխաների միջեւ Հունաստանում կայացած Եվրոպայի կիոկուշինկայ կարատեի առաջնության արծաթե մեդալակիր է: 2016թ. պատանիների միջեւ Հոլանդիայում կայացած Եվրոպայի կիոկուշինկայ կարատեի առաջնության արծաթե մեդալակիր է: 2016թ. ապրիլին կայացած ՌԴ պատանիների կիոկուշին կարատեի առաջնության հաղթող է: Արժանացել էր շազանակագույն գոտու՝ ոսկե գծիկով: Սեւ գոտու թեկնածու էր: Պարգևատրվել էր ԱԶ նախագահի կողմից: 2019թ. ծառայության ընթացքում մասնակցել է ԶԶ միջազգային բաց առաջնության:

Մարզիչ Արթուր Առուշանյանը, ինչպես իր բոլոր սաների, այնպես էլ լավագույն մարզիկներից մեկը հանդիսացող Արթուրի հետ անմնացող սիրով էր կապված: Արթուրի հայրենասեր, մարտնչող, նախաձեռնող տեսակը գրավել էր մարզիչի ուշադրությունը: Նրա մասին արտահայտվելիս մարզիչը նշում է, որ փոքր տարիքին անհամեմատ նա առանձնանում էր հասուն տարիքի մտածելակերպով ու գաղափարներով:

Հավասարակշռված էր, միշտ կատարում էր խոստացածը, կարգապահ ու ճշտապահ էր: Մրցութներում հանդես էր գալիս հիմնականում բարձր քաշային կարգում, ինչն ավելի էր դժվարացնում պայքարը, քանի որ ունենում էր ուժեղ մրցակիցներ: Բայց նա չէր նահանջում ու պայքարում էր մինչեւ վերջ: Նախաձեռնող էր կյանքի տարբեր ոլորտներում: Սիրում էր զբաղվել տարբեր գործերով: Նախաձեռնել էր սուրճի եւ պաղպաղակի ապարատների տեղադրում: Շփվող էր, հեշտ հարմարվող: Իրենցից կրտսեր մարզիկների օգնում էր խորհուրդներով, փոխանցում էր իր փորձը, բարի էր

ու հարգալից շրջապատի հանդեպ: Մարզչի խոսքով՝ նրանք պայմանավորվել էին, որ զորացրվելուց հետո սպորտում ավելի բարձր արդյունքի պետք է գնային: Ինչքա՞ն նպատակներ ու երազանքներ ուներ տաղանդավոր մարզիկը, որոնք այդպես էլ անկատար մնացին: Դեռ ինչքա՞ն պիտի լավեր նրա անունը միջազգային պատվանդաններից:

Ծառայությանը մնացել էր երեք ամիս, որ Արթուրը տուն դառնար ու շարունակել մարզական ուղին: Բանակում հրետանավոր էր: Հայտնի է, որ հոկտեմբերի սկզբին մասնակցել է Ֆիզուլի-Հադրութ առաջին գծում մղված թեժ մարտերին, որտեղ էլ հոկտեմբերի 10-15-ը ժամանակահատվածում քաջաբար հավերժացավ իր զինակից ընկերների հետ միասին: Երկար



ժամանակ չէին կարողանում գտնել նրան: Ընկերների ու հարազատների մոտ դեռեւս հույս կար, որ կարող է ողջ լինել: Ցավոք, ԴՆԹ-ի արդյունքների հիման վրա բազմաթիվ նահատակների մարմինների մասունքների մեջ հայտնաբերվեց նաեւ իրենը: Մարտի 11-ին Ստեփանակերտում տեղի ունեցավ հուղարկավորության արարողությունը:

Արցախի մարզական աշխարհը կորցրեց սպորտը սիրող ու կիոկուշինկայ կարատեում մեծ հաջողություն ունեցող մարզիկ Արթուր Ասրյանին, որն իր հաղթանակներով դեռ երկար պետք է բարձր պահեր Արցախի անունը: 44-օրյա պատերազմում զոհելով կյանքը՝ Արթուրը դարձավ հավերժ հերոս, այդպիսով դրսեւորելով իր հզոր կամքը, պայքարի բարձր ոգին ու սերը հայրենիքի հանդեպ:

Մեր մարզիկների՝ Թաթուլ Զարությունյանի ու Արթուր Ասրյանի հիշատակը միշտ պետք է վառ պահել ոչ միայն արցախյան մարզաշխարհում, այլեւ Արցախի ողջ պատմության մեջ: Սերունդները պարտավոր են միշտ բարձր գնահատել նվիրյալ հերոսների փառքով կատարած անմահ գործը:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

ԿԻՆՈԱՐԿԵՍ

ՎԱՐՈՒԺԱՆ ԳԱՔՐԻԵԼՅԱՆԻ «ՍՅՈՒ» ԿԻՆՈՖԻԼՄԻ ԶՆՈՐԱՆՈՒՄԸ

Երջանկությունը պարզ ցանկությունն է ու դրան հասնելու դժվարին ճանապարհը...

Այս ուղերձն է պարունակում հայաստանյան կինոթատրոնների էկրաններին օրերս հայտնված «Սյու» գեղարվեստական ֆիլմը, որի հեղինակներն են ռեժիսոր Զրաճ Աբովյանը և պրոդյուսեր Վարուժան Գաբրիելյանը: Ընդհանրապես կայացավ Երևանում՝ «Մոսկվա» կինոթատրոնում, որտեղ հավաքվել էր մի ողջ արվեստասեր հասարակություն: Կինոթատրոնի դիմաց՝ բակային

Բազում հարցեր է առաջադրում ֆիլմը, որի գլխավոր հերոսները փորձում են դրանց լուծման ձևերն ու հնարները գտնել յուրովի՝ իրենց պատկերացումներով ու երևակայությամբ՝ միաժամանակ բախվելով բազում դժվարությունների: Նրանցից ո՞վ է ճիշտ, ո՞վ՝ սխալ, կդատի հանդիսատեսը: *Դողա ցավից, թող աշխարհն իմանա, որ դու կաս,*

րաբնույթ դրսևորումներ. այս ամենը հանդիսատեսին մագնիսի պես քաշում-տանում է իր ետևից դեպի իր խառնարանները, որտեղից դու պիտի ընտրես քոնը, քեզ հարազատ միջավայրը: Այս խառնարանում թերևս ամեն մարդ կգտնի իրեն, կճանաչի իր դեմքը:



Գոռա ցավից, թող լսեն քեզ նրանք, Իմանան, որ դու կաս...
Ցավից ու տառապանքից ծնված երգը կարծես փորձում է փոքր-ինչ մեղմել ողբերգությունը ու սփռվել հոգին: Սակայն երբեմն անսահման ցավից մարդիկ կորցնում են իրենց բանականությունը և ընտրում բնագրի ճանապարհը, որը հետագայում դառնում է կործանարար:

Յարթ չէ գլխավոր հերոսու-

հատվածում, տեղի ունեցավ «Կարմիր գորգի» արարողություն: Մուտքի աստիճաններից մինչև Շառլ Ազնավուրի արձանը ձգվող կարմիր գորգը, նրա երկայնքով մետաղական կոնստրուկցիայից կազմված վահանակը, որի վրա փակցված էին ֆիլմին առնչվող խոշոր պաստառներ, տեղակայված լուսային տեխնիկան, որը գեղարվեստական լուծումներ էր հաղորդում կինոթատրոնի ճակատային հատվածին, ինչպես նաև կարմիր գորգի ու լուսատեսանկարահանման հատվածի լուսավորումը, հաճելի երաժշտությունը հոգեպարար



հու՝ Սյուզիի ճանապարհը, անհուն վիշտը կորցնում է նրա հոգեկան հավասարակշռությունը, ստեղծում հոգեբանական խնդիրներ: Անքուն գիշերները, հոգեկան տվյալանքները վերջ չունեն, ոչ մի կերպ չի խաղաղվում նրա հոգին: Նույնիսկ հոգեբանի միջամտությունը չի օգնում նրան:
Ի վերջո, հերոսուհին նախընտրում է կորստի ճանապարհը՝ ծուլվելով իր մասնիկի՝ Էրիկ որդու հետ, միանալով նրա երկնային գոյությանը՝ մենակ չթողնելու համար:
Դավիթի «վերադարձի» ճանապարհը ևս շատ ցավոտ է: Երբ նա փորձում է սթափ գնահատել իրավիճակը ու վերադառնալ



մթնոլորտ էին ստեղծել տարածքում: Ֆիլմի ստեղծագործական կազմը՝ նորահայտ հեղինակներ ու դերասաններ, իրավիճակներն անցան կարմիր գորգի վրայով, ապա դաշիվում դիտեցին ֆիլմի առաջնախաղը:
Ժանրային առումով ֆիլմը դրամա է, երաժշտության հեղինակն է «Yellowheart»-ը: Ֆիլմը նկարահանվել է չորս տարվա ընթացքում՝ ունենալով մեծ դժվարություններ ու խոչընդոտներ:
Գլխավոր դերերում են Սյուզի Ադամյանն ու Միսիան Ստեփանյանը:
Սյուզիի ու Դավիթի ընտանիքում ողբերգություն է տեղի ունեցել. նրանց մանկահասակ երեխան խեղդվում է անտառի լճում... Ի՞նչ է սպասվում երիտասարդ ընտանիքին, երբ ունեն ոչ միայն կորուստ, այլև գաղտնիքներ:
Ի՞նչ է կատարվում կնոջ հետ, երբ երջանկություն է փնտրում այլ տեղ...
Ի՞նչ է կատարվում կնոջ հետ, երբ կորցնում է...
Ի՞նչ է կատարվում, երբ քեզ չեն հասկանում, երբ մենակ ես...



Սյուզիի մոտ, վերջինս արդեն իրենց որդու՝ Էրիկի մոտ էր...
Կախարդական բնություն՝ աշնանային վառ գույներով, իրաշալի երաժշտություն՝ և՛ սիրտ կեղեքող, և՛ ամոքիչ ելեւեներով ու տազնապող երանգներով, դերասանների բնական խաղ ու սոցիալ-կենցաղային տա-

րահիլճի բուռն արձագանքը փաստում է, որ ի դեմս «Սյու» գեղարվեստական ֆիլմի՝ գործ ունենք մի լուրջ աշխատանքի հետ, որի շուրջ արվեստագետների տարբեր կարծիքներ են բախվելու իրար: Այդ են վկայում կինոդիտումից հետո հնչող գնահատականները, որոնց ծանրակշիռ մասը խոսում է ֆիլմի կարևոր ուղերձների ու հեղինակների ձեռքբերումների մասին (հանդիսատեսի բուռն ու երկարատև ծափահարությունները դրա խոսում վկայությունն են):
Պրոդյուսեր Վարուժան Գաբրիելյանը այսպիսի միտք է արտահայտում. «Եթե նկատել եք, ֆիլմում մենք մի փոքրիկ խորի-



դանշան ունենք՝ նավակը, որն ուղարկում ենք նավարկության... Դրա հաջող նավարկության մասին կխոսի հանդիսատեսը, դրանից էլ մենք հետևություններ կանենք»:
Իրոք, միայն հանդիսատեսը ճիշտ կգնահատի ֆիլմը, որը հեղինակների առաջին լուրջ քայլն է, ինչն էլ խթան կհանդիսանա հետագա մյուս կարևոր քայլերի համար:
Ֆիլմի ցուցադրությունից հետո հանդիսատեսները մոտենում էին գլխավոր դերակատարներին ու հեղինակներին, շնորհավորում նրանց, մաղթում հաջողություններ՝ հետագա գործունեության համար:
Երբ մոտեցա գլխավոր հերոսուհուն՝ Սյուզիին, ու գնահատեցի նրա շատ բնական խաղը (ինիչիայլոց, սա նրա առաջին լուրջ նկարահանումն էր), ոգևորվեց հաճելի խոսքերից, շնորհակալություն հայտնեց ուշադրության համար ու առաջարկեց միասին լուսանկարվել: Նրան խոստումնալից ապագա է սպասում, տաղանդավոր աղջիկ է ու շատ ծանր բեռ էր առել իր ուսերին:
83 րոպե տևողությամբ «Սյու» ֆիլմը հանդիսատեսին ստիպում է լարված սպասումով, ծանր ապրումներով հետևել հերոս-

ների դրամատիկ հոգեվիճակին, որն ավարտվում է, սակայն, ոչ ստանդարտ եղանակով:



Երկու ամառ և երեք աշուն ընդգրկող ֆիլմի հեղինակներ Վարուժան Գաբրիելյանն ու Զրաճ Աբովյանը վերջում իրենց շնորհակալական խոսքն ուղղեցին բոլոր այն մարդկանց ու կազմակերպությունների հասցեին, որոնց ջանքերով իրողություն է դարձել այդ ֆիլմի արտադրությունը:
Ֆիլմը նախատեսված է ոչ միայն ներքին սպառման, այլև արտաքին աշխարհի համար:
Ֆիլմը դիտելուց հետո ներկաները կինոդաշիլճի ճեմարահում շարունակեցին վայելել հեղինակների ու դերասանների հետաքրքիր ներկայությունը ճաշակով կազմակերպված հյուրասիրության ժամա-



նակ՝ շփվելով և լուսանկարվելով նրանց հետ:
Բոլորս շնորհավորենք Վարուժան Գաբրիելյանին ու Զրաճ Աբովյանին՝ կինոարվեստում այս լուրջ ու կարևոր առաջին քայլն անելու համար, մաղթենք կանաչ ու լուսավոր ապագա իրենց ընտրած բնագավառում:

Սուրյա ԴԱԶԱՐՅԱՆ

ԳՐԱԿԱՆ ԱՐՁԱՆ

Հրաման ԱԼԵԶՍԱՆՅԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ՄԱՅՐԱՍՈՒՏԻ ՄԻՋՈՎ

Մառ մայրամուտին մի լույս է վառվել սառն հորիզոնում – անծանոթ, հեռու, կայծկլտուն մի լույս, թեպետ գիշերը դեռ չի հորդացել ծանր ու անհաղորդ, մի լույս ինքնատուր շողում է արդեն կույր հորիզոնում.- քո դեմքն եմ հիշում ու մի ջինջ երկիր, քո ծայնն եմ հիշում ու մի լալ երկիր,- ասես կյանքն իրեն դատապարտել է անբեկանելի, ցմահ աքսորի...

Թող գա գիշերը՝ իր սեւ հայացքով, իր նախահարձակ ռիսաբանակով,- ես կռահում եմ նրա մութ լեզուն, նրա վարքը ինձ էլ չի՝ ընկճի: Կկանգնեն ճամփին, կսպասեմ կանչի, ու թե լռության սամումը շաչի, դարձյալ իմ հոգու անբավության մեջ, կքայլեմ, մեկ է, դեպի էն հեռուն, ուր լույսն է ամենդ սրտի պես դողում, վառվում հարազատ, մեղմ ու հուսարձակ, երբ մայրամուտ է ամենուր ասես, եւ դու աշխարհում լքվածն ես միակ: 07.02.2025

ՑԱՍԿՈՑ ՈՒ ԽԱՆՂԱՀԱՐ

Կասեմ - յոթ սարի ետեւից եկար՝ ժառանգորդի ու վտարակի պես, ուրուների խշշուն, ներքաց կղզյակից, անհուշությունից, փթթող ասքից եկար: Ճանաչելին էիր անճանաչների քափորների մեջ - ճաքած սրտով եկար, կարմրած աչք-մտք: Ձեռքերդ՝ մրոտ, նայվածքդ՝ մոխրոտ, հուսակտուր, խնկահոտով եկար, վառողաշունչ: Արյունլվիկ, մզված ու տաժանլլուկ թեկուզ՝ ներհուն եւ իմաստուն, բայց դե ցասկո՛տ եկար ու խանդահա՛ր: Վրեժի մեջ կորած ու սիրո մեջ վառված, չար ու բարին սերտած՝ անխա՛ռն եւ կու՛ռ եկար:

Կասեմ – ներկայի մեջ կալանավոր եղար: Աններկա ես կանգնած օրավաճառների շուկայի մեջ: Անժամանակյա լուսնկա եղար օտարված երկնում: Աններդաշնակ ես՝ սոնետների խախտված պսակի պես,- եւ դու մտմտում ես փախչել ու ետ գնալ էն կղզյակը խշշուն, ուր հալածվեցիր քո խայտանքի համար, տապակվեցիր ներքուստ ճգնակյացի հրով, բայց եւ ազա՛տ եղար ու ինքնապարտ, էնտե՛ղ հոգուդ մուժում յոթը արեւ գտար, Աստծու՛ն ու քե՛զ գտար:

Մի հայրենի չափ ես, մի կարճ շարականի, զինքդ տվել ես, սակայն, էպոսներին, եւ էդ խենթությամբ ես անմեռնելի, եւ էդ կարոտով ես երկրամարմին:-

Դու կդառնաս կրկին քո շրջանը է-ի՝ ցասկոտ ու խանդահար,-

արյունլվիկ, մզված ու տաժանլլուկ թեկուզ՝ վրեժներով, անկոր ու սերերով բեռնված կդառնաս ետ: 12.02.2025

ԿՈՂՊՊՈՒՏ

(ճամփորդական) Ինձ կողոպտեցին աշնան մի տաք օր ելուզակները՝ ծանոթ ու դրսեկ, նրանց հետ էին եւ ներսում ծլած, կամավորական գողեր ու գյաղեք,- քրեմնջում էին, բարբաջում անհերթ դավահունչ տոնով, ժարգոնով տխեղծ, գուժկան դաջվածքներ կային դիմազուրկ նրանց դեմքերին:-

Ես անցնում էի ժամանակների թավիշ փեշերով, խարկված ու ճողված օրերի միջով քայլում էի ես,- ուսապարկիս մեջ հաց ու ջուր էր եւ մի սրբանկար ու մի հին մատյան.- կանգ էի առնում սիրո խորաբուխ ակունքների մոտ, մինչեւ տենչանքիս ծայրը վացվում եւ նոր փայլակ ու վին էի փնտրում իմ ոգու համար,- ճանապարհները ես զգում էի իմ երակների ձգվածության չափ:-

Վաղուց միայնակ ճամփորդ եմ, մեկ-մեկ տարածությունը ավտոկանգով եմ հատում ուղղակի, բայց երանելի ափեր եմ հասնում քայլերով անբեկ: Հիմա կանգնած եմ ավարված ու ցից,- ու մե՛կ է, դարձյալ, աշխարհի համար, թե անարգները ինչպես եմ կորզում ավյուն ու արյուն արդար է-երից... 23.03.2025

Վե՛րջ: Վիճակվա՛ծ է - ես ետ եմ դառնում՝ այնտեղ, ուր մի օր կողոպտեցին ինձ, իմ բաճկոնի տակ դաշույն կա հիմա եւ մի արծաթ խաչ,- էն վանդակներին հիշում եմ հատ-հատ, նաեւ՝ ընչաքաղց շարժումները նրանց եւ ցնծությունը խավարասածիլ,- վերադառնում եմ տեղն այն անմոռաց, ուր պիտի սրբվեմ աշխարհի, Աստծո եւ հոգուս առաջ: 23.03.2025

ՏԵՐ ՈՒ ՄՊԱՍՎԱԾՐ

Ոչ հրաշք եղավ, ոչ Տերը հայտնվեց, թեպետ հավատով առեցուն էի,- դավի կայծակն անխնա զարկեց սիրո դաշտերն ու լեռները է-ի:- Եզերքը կծկվեց պարապի ծոցում, շավիղներին շողք, շշուկ չմնաց, եւ ոգիները քաշվեցին կամաց անժամանակի ծերպերը ցցուն: Լոկ դիմակավոր մի գուժկան է ժանտ ուրվականի պես թափառում - կրկին ազդարարելու գալուստը չարքի եւ արդարության մահը վաղաժամ...

Կանգնել եմ հիմա անլեզու ճամփին, ջանում եմ շարժվել առաջ, բայց մի ուժ ինձ ետ է մղում, ակնարկում վերստին գալիք Աստծուն, հրաշքները հույժ: Ու ես քայլում եմ անցյալը դեպի, ուր գալիքներ են ծնվում լուսերես,- ես ժամանակի դեմքը երկակի սրբում եմ տեր ու սպասավորի պես: 16.04.2025

ԱՄԱՐԱՍԻ ԶԱՆԳԵՐԸ

Եղանակներն անցնում են խառնակ՝ մի այլ աշխարհի խորթ օրենքներով, այլ ժամանակի խրթին կարգով եմ իրար ներիյուսվում մեղք ու տառապանք.-

իմ սրտի մեջ եմ հիմա կանաչում թթեմիները կորած այն երկրի, իմ հոգու մարմար աշտարակին է ղողաճջում անքուն զանգն Ամարասի:-

Որքան հեռացանք հնչուն տեղերից, այնքան համրացավ մեր լեզուն կայտառ,- Քույր, մենք իրար էլ չենք շշնջում մոգական խոսքեր ծիածանաբառ, միմյանց ինքնասույզ լքում ենք հիմա՝ հանց մոլորակներ ուղեծրախախտ, հույլ արեւի պես մայր մտմող երկրից խռովում ենք մենք անհույս ու անբախտ:-

Քեզ նոր երազներ էլ չեն ընծայի, չեն փնտրի հոգիդ՝ մեղմ ու դողդոջուն, նա, որ անվրեպ ինձ ետ էր բերում անկումներից ու մենահանդեսից.- ասես խլությամ տարեգիր եմ լալ, խմբավար՝ ծեծված դղիրդներով սին, բայց լիահնչուն լսում եմ դարձյալ քնած զանգերը սուրբ Ամարասի: 20.05.2025

ՀԱՅԱՍՏԱՆ -2025

(ակամա ներքող) Քո դառնության ծովերն անցա, ցամաքները սեւ ցավերիդ, ապշած անցա թունելներով քո հուրհրան կարոտների,- ինչեր ասես, որ չտեսա, ինչ գահիրումար դեմք ու կերպար,- ու քանի դեռ քո էության ողջ ատլասը չեմ գծել, ես պիտի հիմա նախաբանեմ մի քարտուղար-դպիրի պես.-

Հազար ու մի բիճ ու լոթի քո հոգուց եմ քեզ օտարել, խաչագողներն արեւմուտի տաճարներիդ լույսն են տարել: Քեզ նայել եմ ործախառնաչ, վավաշարյուն, գոլ հայացքով, քո ժպիտը՝ քամուն տվել, իսկ արցունքից թորել եմ ծով: Հազար ու մի ներքինու հետ հազար ու մի .յոթ ես տեսել, հաստել ես, թե ծախու գյաղեք ոնց եմ դավից ոսկի դիզել: Քեզ քաշել եմ խաղերի մեջ, մատնել անկապ, մութ կապերի՝ յոթը պորտը յադին տված՝ շնաբարո տեր ու փերի: Հազար ու մի բոթ ես լսել քո երգեցիկ բաղերի մեջ, քո ունկերն եմ հա՛ սողոցել բայդուշները, բոզ ու ստերջ: Հազար աքլոր ու սինլքոր, հազար գուժկան ու դրուժան թովռացին դեմդ հարբած - հարամի ու գողի նման...

Բայց որքան էլ քեզ խարանեն, զագրաբանեն ու ճանկռտեն, էն ատյանում պիտի արդար ես վկայեմ. Էս տեղերի արքան դու՛ ես, թեպետ խաբված մանկան նման ու հարիՖի, ներս ու դրսից քցվածի պես.- կզա՛ օրը, եւ դու էլի ժիր-կորովի ջանքդ խաչով կբուրվառես, կարիանաս սիրո եռքով՝ զիլ տղերքիդ աջի ներքո, ու կքայլես ոգեշնչված՝ վառ ծիրանին մեջքիդ առած - արքա՛ Հայաստան: 08.06.2025

ՈՐՈՆՈՒՄ

Թե լույսերի մեջ քեզ չգտնեմ, կգտնեմ սարսուռ խավարներում – կլինես զուճատ, անապավեն, բայց եւ՝ հեռատես, զուսպ ու ներհուն:

Թե կրակներում չգտնեմ քեզ, կգտնեմ սառչող մոխիրներում –

կլինես վառված հոգով ու հեզ, բայց էլի՝ շնչեղ ու հրեղեն:

Թե երազներում քեզ չգտնեմ, կգտնեմ էս բիճ օրերի մեջ,– թող որ՝ տանջահար, մրոտ ու գեշ, բայց եւ տենչալի՝ դու կլինես:-

Կորածների մեջ քեզ կորոնեմ, բավիղներում ու ծյունների տակ,- քո նշողումն իսկ կհուշի, թե ինչ աստղի տակ եմ գտնելու քեզ:-

Ես միշտ փնտրողն եմ, թաքնվողը՝ դու, թեպետ թվում է՝ կաս ամենուր եւ կայծկլտուն ես սիրազեղուն անգամ անդինի մառախուղում: 04.07.2025

ԳԻՇԵՐՎԱ ԱՐԾԻՆ

Մրմուռ-մրմունջով կոպերն է փակում մարող երեկոն, ասես լռվել է մի անմեռ մոթի կամ բոթի վրա,- իր համակ լեզուն - տրտունջ ու շշունջ, ողորք ու բողոք, բայց նրա կրծքին աճող գիշերը ուրիշ ոգի է առնում շարունակ եւ հառնող դեմքեր ժողովում սատին իր պատանքի տակ:-

Իսկ դու ցերեկվա սիրելին էիր եւ երկրատարած բերկրանքը նրա, արեւատոնի ոսկե տենորը, զեփյուռներ բերող հովվապետն էիր, եւ սիլուետդ հուզում էր խորունկ այն գաղտնախորհուրդ յոթ լուսիններին, որ ցուրում էին գալիքի ծովում - պատրաստ՝ յոթ քնար քեզ ընծայելու:-


Պառկած ես հիմա դառնության մահճում, գիշերակեսը հատել ես վաղուց,- անցած երեկոն կրկնակելով անցյալդ – կորավ այն մշտաբաղձանք երկրից էլ հեռու, եւ դու փակում ես կոպերդ՝ իբրեւ երագի ավարտ, իբրեւ ծանուցված մի հրաշք ծեսի անխոս չեղարկում, բայց միրհուն անգամ, հազար պատմեշի ու սեւի միջով - հոգիդ տեսնում է արփին գիշերվա, որ խոնարհվում է մերթ խավար ծոցի, մերթ լուսազանգուր եզերքի վրա... 29.07.2025

ԱՆՂԱՐԶ

- Դեռ մատնիչներ կան բյուր, ուրացողներ ու խաչողներ - երկրում, և վերադարձն իր հետաձգում է Փրկիչը՝ լռված ինքնաքսորում,- թե հայտնվեց հանկարծ - Նրան մատնելու՛, ուրանալու՛, անխիղճ խաչելու՛ եմ դարձյալ:
- Ես չեմ վերադառնում Տուն, երբ կարոտից քար ճռնչում եմ անգամ ոսկորներս.- մույն դեերն եմ դեռ ասպատակում էմտեղ-խլելու՛ եմ Տունս, ավերելու՛ նորից, ատելության սյունի՛ն եմ ինձ խաչելու:
- Չեմ վերադառնում Էն հուռթի սիրո գիրկը վայելազեղ, նա եղեմի ազատ շունչն է ասես, թե վերստին նրան ես ընծայվեմ - լքելու՛ է կրկին, միայնության վառվող ծառի՛ն է խաչելու:
- Թողած Փրկիչ ու հույս՝ ես շարժվում եմ անվերջ ետ ու առաջ - անդարձության խաչե ուղիներով... 16.08.2025

ՄԱՐԶԱԿԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ԱՂԱՔԱՆՅԱՆԸ ՎԵՐՍԿՍՈՒՄ Է ՄԱՐԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ



Խառը մենամարտերը (MMA), որը կոչվում է նաեւ «մարտ առանց կանոնների», իրենից ներկայացնում է բազմաթիվ տեխնիկաների համադրությամբ կիրառվող մենամարտ: Խառը մենամարտերի մեջ ընդգրկված են 67 մարզաձևի հզորագույն հնարներ, որոնցից են քիու-քիցուն, գրապլինգը: Դա լրիվ կոնտակտով մարտ է՝ հարվածային տեխնիկայի, ինչպես նաեւ կանգնած վիճակում ու գետնին վարվող մարտի օգտագործմամբ: Ինչպես որ մարզաձեւն է ունիվերսալ, այնպես էլ դրանով պարապող մարզիկը պետք է լինի այդպիսին:

«MMA» (Mixed Martial Arts) տերմինն առաջարկվել էր 1995 թվականին MMA-ի վաղ կազմակերպություններից մեկի նախագահ Ռիք Բլյունի կողմից, իսկ հետագայում իր կայուն կիրառումն է գտել նաեւ ոչ անգլախոս երկրներում:

MMA-ի ակունքները գնում են դեպի մեր թվարկությունից առաջ, երբ դեռ հին հույներն էին մրցում Օլիմպիական խաղերի ժամանակ, սակայն մինչ 1990-ականները խառը մենամարտերն աշխարհում արդիականություն չէր վայելում: Միայն այնպիսի կազմակերպությունների, ինչպիսին են UFC-ը կամ PFC-ը, հիմնվելուց ու զարգանալուց հետո խառը մենամարտերի վարկանիշը կտրուկ աճեց:

Առաջներում մրցաշարերը քիչ կանոններ ունեին: Սակայն բազմաթիվ քննադատություններից հետո առ այն, որ սպորտը

չպետք է լինի արյունարբու գռեհիկ պայքար, մտցվեցին լրացուցիչ կանոններ, որոնք նպաստեցին մրցակիցների անվտանգության բարձրացմանն ու էլ ավելի շատ դիտորդների ներգրավմանը: Այդ ջանքերի շնորհիվ խառը մենամարտերը ներկայումս ամենատարածված ու մասսայականացված մարզաձևերից է, որի մասին են վկայում թե մարտերի վճարովի հեռարձակման չափորոշիչները, թե ՋԼՄ-ների լուսաբանությունները, թե պարապողների թվի աճը եւ թե դրա հետ կապված ապրանքների վաճառքի մեծացումը:

Արցախում խառը մենամարտերը լայնորեն տարածված ու զարգացող մարզաձևերից էր շնորհիվ ճանաչված մարզիչ Գարեգին Աղաբալյանի ջանքերի: Մայրաքաղաք Ստեփանակերտից բացի մասնաճյուղեր էին գործում նաեւ շրջաններում: Հարցազրույցների ժամանակ Գ. Աղաբալյանը պարզաբանում էր, որ նպատակ ունեն արցախցի մարզիկներից լուրջ պրոֆեսիոնալ մարզիկներ պատրաստել: Նպատակի իրականացման պայմաններ էին հայրենիքում եւ երկրից դուրս կազմակերպվող մրցաշարերին մարզիկների հաճախակի մասնակցությունը, ուսումնամարզական հավաքների պարբերաբար անցկացումը:

Բացի մրցաշարերում հաղթող դառնալուց, խառը մենամարտերով զբաղվելը մարզիկներին կոփում է ֆիզիկապես ու հոգեպես՝ դարձնելով նրանց աննահանջ դժվարությունները հաղթահարելիս: Դիտելով խառը մենամարտերից որել է մարտ, անհնար է չնկատել մարզաձևի դաժան ու կոպիտ հնարները: Հատկանշական է, որ մարզիչը մեկնաբանում էր, թե ինչքան էլ կոպիտ լինեն մրցաշարերը, դիրքերից վտանգավոր չեն կարող լինել, ուստի հորդորում էր մեր մարզիկներին չվախենալ մարզաձևի կոպտությունից: Հակառակը՝ այն ձեւավորում է վտանգի դեպքում ռիսկային գործողություններ կատարելու հմտություն: Խառը մենամարտերը սովորեցնում են հեռու մնալ վատ սովորություններից եւ մոբիլիզացնել ուժերը հաղթելու համար:

2020թ. պատերազմին մասնակցած որոշ տղաներ, որոնք կոփված էին խառը մենամարտերում, մեզ հետ հարցազրույցների

ժամանակ ասել են, որ այդ սպորտում ձեռքբերված հմտությունների շնորհիվ կարողացել են լավ արդյունք դրսևորել պատերազմական գործողությունների ժամանակ եւ այն դժվար պահերին, երբ կյանքի ու մահվան կռիվ են տվել:

Արցախում բարձր մակարդակով կազմակերպվել են մրցաշարեր: 2019 թ. սեպտեմբերին Ստեփանակերտի «Վալեքս Գարդեն» համալիրի մարզադաշտում կայացավ Արցախում նախադեպը չունեցող՝ HayFC (Hayastan Fighting Championships) կազմակերպության առաջին պրոֆեսիոնալ մրցաշարը, որին մասնակցեցին 28 լավագույն մարզիկ Արցախի եւ Հայաստանի հանրապետություններից: MMA, K-1 եւ բռնցքամարտ մարզաձևերից կայացած 14 պրոֆեսիոնալ մենամարտերը տաք կրքերի մթնոլորտում անցան: Յուրաքանչյուր պրոֆեսիոնալ պարապող մարզիկի նպատակն է հասնել պրոֆեսիոնալ ռինգ: HayFC կազմակերպության միջոցով, որի հիմնադիրն ու նախագահն էր Գարեգին Աղաբալյանը հնարավոր կդառնար ապահովել մարզիկների մասնակցությունը հաճախակի կազմակերպվող մրցաշարերի, ինչն էլ կխթաներ նրանց մասնակցությանը նաեւ միջազգային պրոֆեսիոնալ առաջնությունների, ինչպես, օրինակ, UFC կամ GLORY կազմակերպությունների մրցաշարերին:

2020թ. պատերազմն ավարտվելուց ամիսներ անց մարզաշխարհում գունագեղ ներկայացումների եւ մարզական աշխույժ միջոցառումների կարոտ կար: Հուրախություն մենամարտերի սիրահար կամ առհասարակ մարզասեր արցախցիների՝ Արցախի խառը մենամարտերի (MMA) ֆեդերացիայի նախագահ եւ մարզիչ Գարեգին Աղաբալյանի նախաձեռնությամբ՝ Ստեփանակերտ ժամանեցին հզորագույն մարզիկներ Ամերիկայից, Ուկրաինայից, Ռուսաստանի Դաշնությունից, առավելապես մոսկովյան «Львиное сердце» մարտական ակումբի լավագույն մարզիկներ: Հնգօրյա այցի նպատակն էր Արցախում կազմակերպել ուսումնամարզական հավաք եւ վարպետության դասեր MMA հավաքականի մարզիկներին համար, ոգևորել արցախցի մարզիկներին, բարձրացնել բարոյահոգեբանական եւ

տեխնիկատակտիկական մակարդակը, ինչպես նաեւ կազմակերպել լավ ժամանց մեր մարզիկների հետ:

Անվանի մարզիկներն աշխարհում հայտնի են ինչպես բարձրագույն տիտղոսներով, այնպես էլ մենամարտային մարզաձևերում ունեցած պրոֆեսիոնալիզմով: Մարտական ոգի եւ մարզական պրոֆեսիոնալիզմ, ուժ եւ հզորություն. դա են խորհրդանշում հետեւյալ անունները. Արմեն Ղուլյան, Հրաչիկ Բոզինյան, Ժորա Այվազյան, Սորիս Բոլեյան, Վարշամ Գեւորգյան, Տարոն Գրիգորյան, Նազար Արզումանյան, Կարեն Փասիկյան, Վարդան Բաբայան, Վահե Սահակյան, Էդուարդ Վարդանյան, Վազգեն Ղազարյան, Սահակ Պետրոսյան:

Տարբեր երկրներից լավագույն մարզիկների Արցախում գտնվելը եւ վարպետության դասեր տալը կարելու մարտավարական նշանակություն ունեցավ ոչ միայն Արցախում խառը մենամարտերի զարգացման, մարզիկների մարզական վիճակի էլ ավելի բարելավման համար, այլ այն առումով, որ դա մեծ քայլ է հայրենիք-սփյուռք կապերի ամրապնդման համար, ինչը արցախցիների համար դրական հոգեբանական ազդեցություն ունեցավ հետպատերազմյան ժամանակաընթացքում: Բացի դրանից պրոֆեսիոնալ ռինգերում հանդես եկող մարզիկներն ունեն ավելի շատ փորձ, որի շնորհիվ շատ բան սովորեցին մեր մարզիկները:

2023թ. բռնատեղահանվելուց հետո Գարեգին Աղաբալյանը վերսկսում է մարզական գործունեությունը Երեւանում. Սեւ գոտի, միջազգային կարգի որակավորված մարզիչ, բարձր մակարդակի մասնագետ եւ նվիրված մարդ, որը տարիներ շարունակ զարգացրել է խառը մենամարտերը (MMA): Նրա պրոֆեսիոնալիզմը, փորձը եւ նվիրումը դարձնում են մարզումները ոչ միայն արդյունավետ, այլեւ ոգեշնչող: Այժմ նա վերսկսում է մարզումները՝ բացելով նոր մասնաճյուղ Շենգավիթ վարչական շրջանում: («ՄԻՎԱ» մարզահամալիր, Մանանդյան 41 հասցեում:) Ընդունելությունը կատարվում է տղաների ու աղջիկների համար՝ սկսած 9 տարեկանից:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

Արցախի բանախյուսություն

Սկիզբը՝ նախորդ համարներում

371. Շանը քըշտավը առանց մըհակ քինիլ չըն:-
Շան մոտով առանց մահակ չեն գնա:

372. Օխծը, վըեր օխծ ա, ճուր խմելիս կծում չի:-
Օծը որ օծ է, ջուր խմելիս չի կծում:

373. Պեցուր սարեն ծյուն կըկյա:-
Բարձր սարին ծյուն կգա:

374. Քուռանա էն աշկը, վըեր առաջ ուրան չի տըեսնալ:-
Քոռանա այն աչքը, որ առաջ իրեն չի տեսնում:

375. Միչև խելունքը մտածե, պելը կետը անց կըկենա:-
Մինչև խելոքը մտածի, խելառը գետն անց կկենա:

376. Շունը շանը վըեննը կոխել չի:-
Շունը շան ոտքը չի կոխի:

377. Ճոտերը աշունքն ըն հըմբարում:-
Ճոտերն աշնանն են համրում:

378. Ջառեն դադիրը զարգարը կըգիդա, յարեն դադիրը յարը կըգիդա:-
Ջառի հարզը զարգարը կիմանա, յարի հարզը՝ յարը:

379. Մոկենն կյուզը ծըղացեն շահն ա:-
Սկան շեռը ջրաղացի շահն է:

ԱՍՈՒՅԹՆԵՐ

380. Չուրաթանեն լյավը կատուն կոտե:-
Չորաթանի լավը կատուն կոտի:

381. Յա ջուբումըս, յա փորումըս:-
Կամ գրպանումս. կամ փորումս:

382. Ծըպատը բոռ աշկեն մի կըկյա:-
Ծիպոտը բոռ աչքին կդիպչի:

383. Հիշքան խոզին կըլոխը մըծանա, ինքն ա տըննական:-
Ինչքան խոզի գլուխը մեծանա, ինքն է տանելու:

384. Կըռվումը չամենչ չըն պըժենում:-
Կռվում չամիչ չեն բաժանում:

385. Եղը շուրվեն խարաբ չանել:-
Յուղը կերակուրը չի փչացնի:

386. Մուշտարին բոռ կըինի:-
Մուշտարին բոռ կլինի:

387. Լյավ արտեն մաչին էլ կածուկ կըինի:-
Լավ արտի մեջ էլ իշատոռուկ կլինի:

388. Հիշքան սարը պեցուր ինի, կըխեն ծունը շատ կըինի:-
Սարը ինչքան բարձր լինի, գլխին շատ ծյուն կլինի:

389. Թամբած էշը ծի չի տըեռնալ:-
Թամբած էշը ծի չի դառնա:

390. Թա չոր ծառը կընանչի, անխրատն էլ

կիըմանչի:-
Թե որ չոր ծառը կանաչի, անխրատն էլ կամաչի:

391. Բըզարումը կորած հընգերը տանը կըթըթենան:-
Շուկայում կորած ընկերոջը տանը կգտնեն:

392. Ծուն ծմերուկի չափ բիդար:-
Երանի ծուն ծմերուկի չափ լիներ:

393. Ծըղըցպանեն քըթըր միշտ ըլլերոտ կըինի:-
Ջրաղացպանի քիթը միշտ ալրոտ կլինի:

394. Լյավ ծաղկի վրա շատ մեղու կլինի:-
Լավ ծաղկի վրա շատ մեղու կլինի:

395. Շանը լաց ինիլավ էրվում ա, ուրուշու լուս տալի հետե:-
Մոմը լացելով վառվում է ուրիշին լույս տալու համար:

396. Ասլանը ասլան ա, էք ինի, թա վըերց:-
Ասլանը ասլան է, էգ լինի, թե ործ:

397. Մին ծու իփիլավ մին ճուտ ըս խեխտում:-
Մի ծու եփելով մի ճուտ ես խեղդում:

398. Աջալը վըեր կյամ ա, մաջալ չի տամ:-
Մահը երբ գալիս է, միջոց չի տալիս:

Շարունակելի

Աղելա/Արշալույս/ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կորել է Երևանի պետական համալսարանի կողմից 1995թ., գրանցման համար՝ Ա 010385, **Հովիկ Խանլարի Ջիվանյանին** տրված իրավաբանի որակավորման դիպլոմը:

Համարել անվավեր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՍՏԻԳՆԱԿԱՆ ԳԵՂԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԽՍԲԱԳԻՐ՝ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ	Հիմնադիր՝ «Լուսարար» կրթամշակութային ՀԿ	✉ ք.Երևան, Անտառային փ. 188/16 ☎ 097-22-38-27 E-mail: gorctert@mail.ru: www.lusarar.info	Մեջբերումների եւ փաստական տվյալների ստույգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում: Թերթը վաճառքի ենթակա չէ:	Տպագրվում է «Լիմուշ» ՄՊԸ տպարանում: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Տպաքանակ՝ 500 Ստորագրված է տպագրության՝ 29.09.2025թ.:
--	--	--	--	--